



Հրաչյան  
Արտեղան



ՍՈՎԵՏԱՀԱՅ ԲԵՄԻ ՎԱՐՊԵՏՆԵՐ



Հրատարակում է Հայկական Թատերական  
Բնկերության Նախագահության որոշմամբ

Ն. ՄՈՒՐԱԴՅԱՆ

792 (Կ7. 925) (092 Արմենակ)

15

Արմենակ  
ԱՐՄԵՆԱԿԱՆ

A 1/297



ՀՊԸ  
ՀՀ ԱՐՄԵՆԻԱ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1959

Н. МУРАДЯН

**«АРМЕН АРМЕНИЯН»**

*(На армянском языке)*

Издание Армянского Театрального Общества  
(А Т О)

Ереван. 1959

1932 թվականն էր, ամառային շուք երես-  
կոներից մեկը: Երևանի «Ինտուրիստ» կոշ-  
ված հյուրանոցի ամառային տաղավարում  
հետզհետե հավաքվում էին նրա համարյա-  
մշտական այցելուները, մեծ մասամբ ար-  
վեստագետներ, դերասաններ, գրողներ:  
Նրանք այդտեղ էին գալիս ոչ այնքան մի բան  
ուտելու կամ խմելու, որքան մի-մի գավաթ  
սուրճի պատրիվակով ընդհանուր ծանոթների  
հանդիպելու, նրանց հետ զրուցելու, օրվա  
նորություններ փոխանակելու համար:

Սեղաններից մեկի շուրջը նստած էին մի  
խումբ գրողներ ու դրամատուրգներ, գրեթե  
բոլորն էլ հայտնի անուններ մայրաքաղա-  
քում: Նրանց մեջ սակայն աշքի էր ընկնում  
խոշոր, արտահայտիչ դիմագծերով, կա-  
պուցտ աշքերով տարեց մի մարդ, որի ճեր-  
մակ բաշը շատ լավ էր հայտնի բոլորին.

ղա Ալեքսանդր Շիրվանզադեն էր: Նրա հետ  
նստած էին նաև Դերենիկ Դեմիրճյանը, Ստե-  
փան Զորյանը և ուրիշներ:

Հենց այդ ժամանակ սրճարան մտավ  
փոքրահասակ, խիստ կենդանի դիմագծերով  
մի մարդ և դանդաղ առաջանալով՝ սովորու-  
թյան համաձայն դիտեց շուրջը, ոչ այնքան  
ազատ տեղ, որքան ծանոթ դեմքեր գտնելու  
համար:

— Արմե՞ն... Արմենյա՞ն... — ձայնեցին  
նրան մեզ ծանոթ սեղանից:

Արմենյանն ուրախացած մոտեցավ նրանց,  
մտերմորեն բարեկց բոլորին և մի նոր աթոռ  
քաշելով՝ նստեց:

Բնականաբար խոսակցությունը դարձավ  
հենց նրա շուրջը:

— Երանի՝ մեկ էլ տեսնեի Արմենյանի  
ֆրանցը, — ասաց մեկը: — Հիշո՞ւմ եք, ինչ-  
քան էր ուժեղ, ինքնատիպ:

— Իսկ նրա ծագոն մի՞թե պակաս էր, —  
լրացրեց մեկ ուրիշը:

— Ես ավելի լավ բան չդիտեմ, քան նրա  
Սատանան:

— Ինձ վրա խորապես տպավորվել է Արմենյանի Օսֆալդը, — հարեց Զորյանը:

— Ի՞նչ կասեք նրա դոկտոր Ռանկի մասին, — հետ շմնաց սեղանակիցներից մեկը:

— Հապա՛ նրա շարածճի Սատանայի ճուտը, — վրա բերեց Դիմիրճյանը:

Թեև կարճ ռեպլիկներով, բայց ասես խոսք մեկ արած, արտահայտվել էին բոլորը: Լուս էր միայն Շիրվանզադեն և դեպի նրան էլ դարձան մյուսների հայացքները:

— Է՛, դուք պետք է տեսնեիք Արմենյանի Սուրենը, — աշխուժացավ ալեղարդ դրամատուրգը: — Եվ Գովերնյորն, իհարկե...

Չէր խոսում միայն մի մարդ. Արմեն Արմենյանը:

Յոթ-ութ անմոռանալի դերակատարում, այդ թվում այնպիսի բարդ կերպարների, ինչ-պիսիք են Յագոն, Ֆրանցը, Ռանկը...

Հեշտ է արտիստի համար ստեղծել մեկ տասնյակից ավելի բեմական կերպարներ, որոնք շարունակեն հիշվել, հիացում պատճառել շատ ու շատ տարիներ հետո:

Այժմ հեշտ էր թվում նրա վաստակը, իսկ արտիստական կյանքն այնքան դժվարին էր...

Արմենակ Իվելիյանը ծնվել է 1871 թ. սեպտեմբերի 10-ին (Հին տոմարով) Սամսոնում, առևտրականի ընտանիքում։ Նախնական կրթությունն ստացել է Կոստանդնուպոլսի հայոց թաղացին դպրոցներից մեկում։ Աշխույժ, զգացուն երեխան չի կարողանում տանել դպրոցներում տիրող ծանր ոեժիմը և հաճախ է փախչում դասերից՝ քիչ հոգս շըպատճառելով հարազատներին։ Հայրը՝ նուրիշան Իվելիյանը նրան տալիս է Բերայի նորաբաց գերմանական դպրոցը։ Այստեղ ընդունված պատիժները, սակայն, իրենց նվաստացուցիչ հանգամանքներով ավելի են անհանդուրժելի լինում, քան Բրուսայի ֆալախկան և ծխական դպրոցի քանոնահարությունը։ Փոքրիկ Արմենակը ոչ մի կերպ չի կարողանում համակերպվել այդ պայմաններին։ Հայրը փորձում է բռնությամբ նրան կապել դպրոցի հետ, բայց անօգուտ, ի վերջո վճռովում է նրան հանձնել Վենետիկի Մխիթարյանների՝ Կաղը գյուղի մասնաճյուղի գիշերօթիկ դպրոցը։

Տասը տարեկան էր նա այդ ժամանակ։

Ի բնեւ վառվուուն, ճոխ երեակայությամբ  
օժտված երեխան շատ վաղ է հանդես բերում  
իր «բեմական» ընդունակությունները: Նա  
հաճախ է հանդես գալիս դպրոցական հա-  
վաքույթներում, արտասանելով հայերեն և  
ֆրանսերեն: Սիրում է կարդալ՝ լսածն ու  
կարդացածը հասակակիցներին պատմել՝  
գունազարդելով և ճոխացնելով առանց այն  
էլ գունազարդված ոռմանտիկական վեպե-  
րը, ինչպես և դաշնամուր նվազել: Երեխայի  
հակումները դուր չեն գալիս պրակտիկ կյան-  
քով ապրող հորը. նա վախենում է, որ տղա-  
մին մի օր դերասան կարող են դարձնել և  
հանելով նրան այդ դպրոցից՝ տանում հանձ-  
նում է Օրթագյուղի գիշերօթիկ վարժարանը:  
Բայց այդ նշանակում էր մուտքի տոմս շու-  
նեցող հանդիսատեսին թատրոնի ճեմասրա-  
չից քշել... դաշլիճ: Օրթագյուղը Պոլսում  
հայտնի էր հատկապես իր թատրոնով, ուր  
ժամանակին իրենց հեղինակություններն էին  
ներկայացրել Մկրտիչ Պետիկթաշլյանը, Պետ-  
րոս Դուրյանը, Արապիոն Հեքիմյանը, Թով-  
մաս Թերզյանը և ուրիշներ, ուր հանդես էին  
եկել ականավոր դերասաններ Սնակյանը,  
Աղամյանը, Աստղիկը, Հրաչյան, Սիրանույ-

շը... Արմենակը առիթը բաց չի թողնում դիտելու այդ թատրոնի ներկայացումները, փորձելու իր ուժերը արտասանելու մեջ։ Նրան սիրով լսում են հանդեսներին, խրախուսում են, ոմանք նույնիսկ գուշակում են նրա ապագան։

«Այս տղան կատարյա՞լ գերասան է...»։  
Եվ սակայն, Արմենակ իփեկյանը այս դպրոցում էլ երկար չի մնում։ Երկու տարի հետո նրան տալիս են Պոլսի կենտրոնական վարժարանը, որպես ցերեկօթիկ աշակերտ։ Այստեղ նա, ի միջի այլոց, վեց ամիս աշակերտել է հանճարեղ երգիծաբան Պարոնյանին, ուսելով նրանից... հաշվապահություն։

## 2

Պատանի Արմենակի հրապուրանքը թատրոնով, իհարկե, գեռևս հեռու էր բնմին նվիրվելու վերջնական որոշում լինելուց։ Դա սոսկ մի ներքին մզում էր, ժամանակավոր մի հափշտակություն, որն ի վերջո պետք է տեղի տար հասուն մի վճռի՝ ընտրելու մի ավելի ապահով և, ըստ ամենայնի, լուրջ զբաղմունք։ Բայց մարդս կյանքում մեծ մասամբ դժունում է այն, ինչ փնտրում է և երբ կա ներ-

քին, թեկուզ շգիտակցված ձգտում, պատահական զուգաղիպությունները ավելի նպաստում են դրան, քան խանգարում։ Այդպիսի մի բախտավոր անակնկալ է լինում Արմենյանի կյանքում հանճարեղ ողբերգակ Պետրոս Աղամյանի վերադարձը Ռուսաստանից, նրա սկած աղմկալից ներկայացումները։ Իր արվեստի շքեղ ծաղկումն ապրող արտիստը թովում, խանդավառում է հասարակության ամենաբազմազան խավերին, բայց ամենից ավելի, իհարկե, երիտասարդությանը։ Արմենակ իփեկյանի համար, սակայն, այդ ներկայացումներն ունենում են ճակատագրական նշանակություն։ Աղամյանը բորբոքում, հըրդեհի է վերածում այն կայծը, որ կար պատանու սրտում։ Տատանումներն ու երկմըտանքները մնացել են ետևում, ընտրված է կյանքի վերջնական ուղին։ Նա պետք է նվիրվի բեմին, նա պետք է արտիստ դառնա։

Արմենյանի վրա խոր, անջնջելի տպավորություն են գործում այդ ամիսները։ Նա մոռանում է իր դասերը, մոռանում քունն ու հանգիստը և իրար ետևից կարդում «Համելետը», «Օթելլոն», փակվելով սենյակում՝ սկսում է բարձրաձայն արտասանել, զանա-

---

լով նմանվել Աղամյանին, Նա հիմա միայն  
մի սեր ունի, մի երազանք, նրա շրթունքների  
վրա միայն մեկ անուն կա. Աղամյան: Ոչինչ,  
որ ընկերները նրան կատակով «Աղամյանի  
խենթ» են անվանում: Չէ՞ որ նա բախտ է  
ունեցել համբուրբելու մեծ արտիստի ձեռքը  
և ինքն էլ արժանացել նրա համբույրին...

Սակայն անձնական շփումը Աղամյանի  
հետ շատ կարճ է տեսում: Կոկորդի հյուծախ-  
տը մի քանի ամիսների ընթացքում տապա-  
լում է հայ բեմի հսկային և նա անկողին է  
լնկնում, երբեք այլևս չկանգնելու համար:  
Վերջին անգամ Արմենյանը տեսնում է նրան  
դագաղում. «Նույն գմալելի կլասիկ պրոֆի-  
լը՝ եզրափակված նորբ մորուքով, ինչպես  
ցույց է տալիս մահվանից մի քանի ամիս ա-  
ռաջ հանված իր լուսանկարը, նույն ալեծփան  
գանգուր մազերը՝ մի փոքր ալեխառնված:  
Նա կարծես գլուխը մի կողմ շուռ տված,  
քնած լիներ հանդարտ քնով»:

Այսպես է տպավորվել Արմենյանի հիշո-  
ղության մեջ հանճարեղ արտիստի գեմքը  
վերջին այն պահին, որից հետո նա հողին  
պետք է հանձնվեր:

Նույն հուշերի մեջ, որից մեջբերում կա-

տարեցինք և որին նորից կանդրադառնանք  
հետագայում, Արմենյանն այսպես է բնորո-  
շում Աղամյանի արվեստը.

«Ո՞րն էր Հիմնականում Աղամյանի հմայ-  
քը: Նախ՝ կերպարի էության խոր և անշեղ  
դրսեորումը, ներդաշնակված արվեստի ներ-  
քին ու ոիթմիկ պլաստիկական համապա-  
տասխան արտահայտչությամբ, երկրորդ՝  
առողանության հատկությունը՝ միացած շեշ-  
տադրությունների բազմաստիճան ելեքջնե-  
րով, երրորդ՝ հարուստ դիմախաղը և պառ-  
զաների բազմաբովանդակությունը, չորրորդ՝  
ձայնի բացառիկ բարիտոնային հուզական  
երաժշտականությունն ու բազմերանգությու-  
նը, հինգերորդ՝ տղբերգական պաթոսի և այլ  
դերասանական էֆեկտների շափի գիտակցու-  
թյունն և խաղի էսթետիկ ու միաժամանակ  
ռեալիստական դրսեորումը, վեցերորդ՝ ան-  
շուշտ, անխոնջ աշխատասիրությունը և զար-  
գանալու, կատարելագործվելու բնազդացին  
համառ ձգտումը և այլն, և այլն: Մի խոսքով՝  
այն բոլորը, ինչ հատուկ է միայն հանճար-  
ներին»:

Այս տողերը գրվել են շատ տարիներ հե-

տո, պատանեկան վաղանցիկ տպավորությունների տակ և չնայած դրան՝ հիմնականում ճիշտ են բնորոշում Աղամյանի արվեստի էությունը։ Իրոք, մեծ արտիստի արվեստի հիմնական տարբերիչ գիծը մարդկային հոգիների մեջ թափանցելու, դրանց բազմախորհուրդ ու հակասական կողմերը ռեալիստորեն արտացոլելու մեջ է, մի բան, որ հատուկ է միայն ճշմարիտ հանճարներին։ Աղամյանի արվեստի բազմակողմանի քննությանը Արմենյանը դեռ պետք է շատ անգամ վերադառնա հետագայում, և՛ ֆրանսիական վարպետների մոտ ուսանելու ժամանակ, և՛ բեմական գործունեության հասուն շրջանում։ Արտիստի ողջ կյանքում Աղամյանը մնում է այն ուղեցուց աստղը, որին նա աշքից չի կորցնում երբեք։

### 3

Քսանամյա Արմենակ իփեկյանը այժմ արդեն մի երազանք ունի. հակառակ հոր ցանկության, որ ուղում էր նրան անպայման առևտրական դարձնել, իր գործի շարունակողը, թողնել և հեռանալ, բայց ոչ թե անոռշ մի երկիր, այլ անպայման Կովկաս, Թիֆ-

լիս, ուր գնացել ու գնում են պոլսահայ բուր անվանի դերասանները, որտեղ իր տաղանդն է մարզել Պետրոս Ադամյանը։ Բայց ինչպես գնալ, ի՞նչ միջոցներով։ Չէ՞ որ ինքը դեռևս ոչ անում ունի, ոչ էլ նույնիսկ միջոցներ։

Ահա այդ ժամանակ է, որ Պոլիս է ժամանում Հայտնի դերասան և ոեժիսոր Գեորգ Պետրոսյանը, «Թատերական կոմիտեի» հատուկ հանձնարարությամբ դերասաններ տանելու թիֆլիս։ Արմենյանը ևս ներկայանում է Պետրոսյանին և Հայտնում իր պատրաստակամության մասին՝ գործելու նորակազմ իմբում։ Պետրոսյանը սկզբում չի համաձայնում. ինչպես տանել այդ անփորձ երիտասարդին և այն էլ ծնողների կամքի հակառակ։ Ի վերջո որոշվում է, որ Իփեկյանը թիֆլիս մեկնի առանձին, իր անձնական պատասխանատվությամբ։

Մի կերպ առնելով մոր Համաձայնությունը, բայց Հակառակ Հոր կամքի, 1891 թ. օգոստոսի վերջերին նա մեկնում է թիֆլիս։ Պոլսում նավ է նստում որպես Արմենակ Իփեկյան, իսկ Բաթումում ափ դուրս գալիս երբեք Արմեն Արմենյան։ Հետևելով տրադի-

ցիալին, կյանքի նոր շրջանը նա ոտք է դնում բեմական նոր անվամբ (թեև այդպես նրան սկսում են կոչել մի փոքր ուշ, թատերական առաջին սեղոնի վերջում):

#### 4

Անցյալ դարի իննսունական թվականների վերջերից, ավելի որոշակի՝ Աղամյանի Կովկասից Հեռանալուց, ապա նրա վաղաժամ մահից հետո հայ թատրոնն ապրում է իր հերթական ծանր շրջաններից մեկը: Թատերական գործը, որ երբեք բարվոք հիմքերի վրա դրված չէր եղել և իր գոյությամբ պարտական էր բնիմարվեստին նվիրված մարդկանց անսահման սիրուն ու նվիրվածությանը, մարդիկ, որոնց կրած նեղություններն ու վիրավորանքները, նյութական ու բարոյական տառապանքները թեթևանում էին միայն այն գիտակցությունից, որ նրանք ծառայում են ժողովրդին և ըստ արժանվույն գնահատվում են նրա կողմից,— այդ գործն ահա, որ աղուային գիտակցության արթնացման, հասարակական առաջադիմության կարևոր գործոններից մեկն է, նորից էր օրակարգի խընդիր դառնում մտավորական շրջանների հա-



... Երիտասարդ Հասակում



Արմենիան ամուսինները Մ. Մնակյանի հետ

մար: Սունդուկյան և Աղամյան տված մի ժողովուրդ չեր կարող հաշտվել թատրոն չունենալու մտքի հետ: Բայց ինչպես կազմակերպել գործը, ինչպես ապահովել թատրոնի գոյությունը, պահել դերասաններին, խրախուսել դրամատուրգներին, այսինքն՝ ստեղծել ինքնուրույն ռեպերտուար, առանց որի աղջային թատրոնի գոյությունն անիմաստ էր:

Ուշագրավ է, որ միայն «Մշակ» լրագիրը 40 տարվա ընթացքում (1872—1912) տպագրում է 36 առաջնորդող հոդված (Հաշված ստորագրություն ունեցող առաջնորդողները), նվիրված թատրոնին, նրա գոյության ցավոտ արցերին: Իսկապես որ ցավոտ... Ահա թե ինչպիսի տիսուր վերնագրեր էին կրում այդ առաջնորդողները. «Հայոց թատրոնի օրհասականը», «Ո՞վ է մեղավորը», «Ինչ՝ զի հայոց թատրոն», «Ո՞ւր է թատրոնը», «Գանգատներ», «Այդպիս չի կարելի», «Թողնենք որ մեռնի»...  
A

Բայց չեր կարելի թողնել, որ մեռնի, ո՞ւ եվ սակայն նույն հարցը՝ հազար ձեռվկրկնված. ո՞վ պետք է զորավիր դառնա թատրոնին, հասարակական ո՞ր խավը: Ժո-



ղովո՞ւրդը, բայց նա տառապում էր թշվառության ու տգիտության մեջ, անմիջականուրեն անմասն էր գրականությանն ու արվեստին, վերջապես նրա կարծիքը հաշվի առնող չկար, նորելուկ բորժուազիա՞ն. բայց նա ինչո՞ւ պետք է ձեռնարկեր մի գործի, որտեղ շահ չկար: Ի վերջո մի քանի անդամ կազմված և վերակազմված թատերական կոմիտեն կամ Հայոց դրամատիկական ակումբը փոփոխելով անունները, չեին փոխում իրենց էությունը. դա մի քանի մարդկանց շահը և փառասիրությունը (իսկ սա նույնպես շահ էր) բավարարելու միջոց էր, թեկուզ այդ կոմիտեի կամ ակումբի մեջ լինեին ֆանատիկորեն նվիրված մարդիկ:

Ահա թե ինչու և այդ տասնամյակում, և հետագայում հարկ է լինում նորից ու նորից թատերական խմբեր կազմակերպել: Դրանց միավորման մասին խոսք լինել չեր կարող, թեև մամուլում հաճախ էին առաջարկներ լինում այդ ոգով: Երբ հետագայում կազմակերպվեց «Աբելյան-Արմենյան թատերական խումբը», բոլորը խանդավառությամբ ընդունեցին այդ լուրը, բայց և գտան, որ այն մեկ

սեգոնից ավելի չի կարող գործել և եթե այդ  
կանխագուշակումը շարդարացավ և խումբը,  
պարբերաբար վերակազմվելով ու թարմա-  
նալով, գործեց հինգ տարի, ապա դա  
շնորհիվ կազմակերպիչների տաղանդի և  
նվիրվածության, իրենց կատարած միսիացի  
բարձր գիտակցության:

Այս պայմաններում ահա հեշտ չէր թատե-  
րախումբ կազմակերպել: Իսկ եթե սրան  
ավելացնենք նաև ռեպերտուարի հարցը, որ  
մեր թատրոնի գոյության ամբողջ ժամանա-  
կաշրջանում իսկապես ցավոտ մի հարց է  
եղել: Բայց «ռեպերտուարի սովոր» մի բան  
է գերասանական մեծ ու կայուն կոլեկտիվի  
համար և այլ բան՝ փոքր, պատահական  
խմբի համար, որտեղ ամեն մեկն աշխատում  
է մի որևէ գեր ռւնենալ, արդարացնել իր գո-  
յությունը:

Ահա թե ինչու հայ թատրոնի գործիչները  
հաճախ էին իրենց հայացքն ուղղում Պոլիս,  
փորձեր անում կազմակերպված ձեռով դերա-  
սաններ թերել այնտեղից, գոնե մասամբ  
լրացնելու այն բացը, որ գոյացել էր Աղամ-  
յանի կորստով:

Արմեն Արմենյանը առաջին անգամ բեմ է բարձրանում Գաստոնի դերում, Ալեքսանդր Դյումա-որդու «Քամելիազարդ տիկին» դրամայում։ Մարգարիտի դերը կատարում է Սիրանուցը, Արմանինը՝ Հովհաննես Աբելյանը։ Չնայած լիակատար անփորձությանը, սակավ փորձերին, ընդհանրապես անծանոթ միշտավայրին,— նա հաջողությամբ է դուրս գալիս փորձությունից։ Լրագրերը դրականորեն են արտահայտվում նրա մասին։ Այդ հաջողության մեջ վճռական դեր է կատարում, անշուշտ, նրա արտաքինը։ Բեմի վրա էր նուրբ կազմվածքով, գեղեցիկ դիմագծերով, էլեկանտ շարժումներով մի երիտասարդ, որը միաժամանակ ուներ զգալիորեն մշակված առողջանություն։ Մի խոսքով, նրան լավ առագա են գուշակում, և հենց այդ էլ քաջալերում, թե է տալիս Արմենյանին։

Այդ և հաջորդ թատերական սեղոններին Արմենյանը կատարում է ևս մի քանի, իր տարիքի և փորձի համեմատ բավականաշափ պատասխանատու դերեր, այդ թվում Պետրուշի (Շեքսպիրի «Անսանձի սանծահարու-

մը»), Ռուբեն (Գուցկով, «Ռոբիել Ակոստա»), Անդրե Ռոսվայն (Օկտավ Ֆյոլյենի «Դալիւմ») և այլն:

Ուշագրավ են վերջին դերակատարման հանգամանքները: Սիրանուցի մոտ տեսնելով «Դալիւմ» պիեսը, նա վերցնում է կարդալու և ահա ոգեսրվում է երիտասարդ ու դժբախտ երաժիշտ Անդրե Ռոսվայնի դերով: Իսկույն արտագրում է, անգիր է անում և սկսում պատրաստել իր համար: Սեզոնի վերջում, եղբ հարց է բարձրանում, թե խումբն ի՞նչ պիես պետք է բեմադրի երիտասարդ դերասանների օգտին, Սիրանուցի առաջարկով կանգ են առնում «Դալիւմ» պիեսի վրա: Բայց ո՞վ պետք է խաղար Ռոսվայնի կենտրոնական դերը, ո՞վ կարող էր պատրաստել զա մի երկու օրում: Արելյանը հրաժարվում է խաղալ, մերժում են և ուրիշները: Այդ ժամանակ ահա Արմենյանը խնդրում է դերն իրեն տալ: Բարձրանում է տաք վիճարանություն, ոմանք գտնում են, որ վաղաժամ է Արմենյանի համար հանդես դալ այդպիսի պատասխանատու դերով, մյուսներն արտահայտվում են հօգուտ նրա: Սիրանուցի, ինչ-պես և Շիրվանզադեի հեղինակավոր խոսքը

վերջ է տալիս վեճին. դերը հանձնվում է նրան: Երիտասարդ դերասանին այժմ ոչինչ չի մնում, քան լարել իր ողջ ուժերը և խաղալ մի դեր, որը տարիներ առաջ այդ նույն բեմում խաղացել էր Ադամյանը: Ծնորհիվ Սիրանուշի և մյուսների շերմ աշակցության, ներկայացումն անցնում է անսայթաք:

Ահա թե ինչ է զրում այդ ներկայացման առթիվ «Արձագանքը».

«Երկուշաբթի փետրվարի 10-ին, հայ դերասանական մշտական խումբը, ի նպաստ «խմբի մնացյալ անդամների», ներկայացրեց «Դալիլա» դրաման: Խաղն ընդհանրապես լավ անցավ: Ա. Արմենյանը, որ պիեսում գլխավոր դերն էր կատարում, իր դերը սպասածից շատ լավ տարավ: Նկատվում էր, որ նա շատ ճիգ էր թափել ուսումնասիրելու իր ամեն մի շարժվածքը, միմիկան և այնպես էր բեմ գուրս եկել: Բնմի երիտասարդ սիրահարն այդ երեկո ցույց տվեց, որ նա կարող է լավ դերասան լինել, որ նա ապագա ունի: Մի բան, որ նրան շատ էր խանգարում, այդ նրա ձայնն էր, որ մեծ արգելք էր լինում նրան ցանկացած հաջողությունն ունենալու: Ամեն մի գործողության վերջում Արմենյանը

Հասարակության կողմից վարձատրվում էր  
բուռն ծափահարություններով»:

Բայց Արմենյանն այդ տարիներին ոչ  
միայն գովասանքների է արժանանում, այլև  
լուրջ դիտողությունների և այդ՝ հատկապես  
իր խաղընկերների, տեղի փորձված դերա-  
սանների կողմից։ Նրա խաղը գեռես հեռու էր  
ոեալիստական լինելուց։ Ահա թե ինչու Հով-  
հաննես Արելյանը նրա ուշադրությունն է  
Հրավիրում պարզ, բնական արտասանու-  
թյան վրա, որ նշանակում է թե՝ Հոգեկան  
ապրումների ոեալիստական վերարտադրու-  
թյան վրա։ Արմենյանի համար հեշտ չէր կա-  
տարել այդ պահանջը։ Հանդիսատեսի վրա  
անպայման տպավորություն գործելու, ուշա-  
դրության կենտրոնում գտնվելու գայթակը-  
զիշ ցանկությունը շատ հաճախ մոռացնել է  
տալիս անսամբլի գաղափարը, մի գաղա-  
փար, որ հետագայում, հասուն տարիներին  
պետք է ընկներ նրա ոեթիսորական աշխա-  
տանքների հիմքում։

Հրամայական է դառնում սովորելու, կա-  
տարելագործվելու հարցը, սովորելու ոչ մի-  
այն խոսքի արվեստը, խաղի արվեստը, այլև  
արվեստն ընդհանրապես, խորանալ, թա-

---

փանցել նրա գաղտնիքների մեջ։ Այդ էր պահանջում նրա սեփական շահերը, այդ էր պահանջում հայ թատրոնի շահերը, որ դարձյալ իրենն էր, իր սեփականը։

Եվ ահա 1894 թ. օգոստոսին, ուղիղ երեք տարի հետո, այս անգամ ստանալով հոր համաձայնությունը, նա մեկնում է Եվրոպա։ Նուրիջան Իփեկյանի համար դա ձեռնտու էր այնքանով, որ մոլորյալ որդին առևտրական պրակտիկա ձեռք կբերեր, թերևս և մոռացության տար բեմն ու գերասանությունը։ Արմեն Արմենյանի համար էլ դա ձեռնտու էր նրանով, որ կընկներ նոր միջավայր, գուցեև իր երազած միջավայրը...»

## 6

Սկսվում է գլխապտույտ թափառումների մի շրջան։

Հասնելով Համբուրգ, Արմենյանը տեղավորվում է երաժշտության մի բավականաշափ հայտնի պրոֆեսորի ընտանիքում, ի մոտու ծանոթանում գերմանական կլասիկ երաժշտությանը, բայց մի տարի շանցած վերադառնում է Պոլիս, ապա նորից հոր գործով մեկնում է Բրյուսել, այստեղ ներկայա-

նում է «Արքունական թատրոնի» դիրեկտորին, որպես սիրող կապվում է այդ թատրոնի հետ, հետեւում է փորձերին, լսում է աշխարհահռչակ երաժիշտ-կատարողների, հաճախում է թանգարանները, տեսնում է Սառա Բեռնարի խաղը նրա թրյուսել կատարած գաստրոլներից մեկի ժամանակ, հափշտակվում է մեծատաղանդ դերասանունու արվեստով այն աստիճան, որ ներկայանում է նրան, պատմում է իր կյանքը և հայտնում բուռն փափազը՝ աշակերտելու նրա մոտ և, արժանանալով բարյացակամ վերաբերմունքի, մեկ ամիս հետո մեկնում է Փարիզ և ընդունվում Սառա Բեռնարի թատրոնը:

Սակայն շատ շուտով նա համոզվում է, որ այդ թատրոնում նա կարող է տարիներ խաղալ (անշուշտ, աննշան, էպիզոդիկ դերեր) և այնուհանդերձ ոչինչ չսովորել: Սառա Բեռնարը շատ էր զբաղված, որպեսզի կարողանար իր խմբի երիտասարդ դերասանների հետ ստուդիական պարագմունքներ անցկացնել: Եվ Արմենյանը, որ եկել էր հատկապես սովորելու համար, դիմում է ֆրանսիական պետական կոնսերվատորիայի դիրեկտորին: Ապարդյուն ջանք. նրան շեն ընդունում մե-

ծահասակ լինելու համար, բայց, ընդառաջ ջելով նրա համառ թախանձանքներին, ուղարկում են դրամատիկական կուրսերի մի մասնավոր հիմնարկություն, որտեղ դասավանդում էր նաև աշխարհահոչակ դեբասան Մունե Սյուլլիի եղբայրը՝ Պոլ Մունեն:

Վերջապես սկսվում են այնքան երազած պարագմունքները: Չգոհանալով մեկ ուսուցչով, Արմենյանը առողջանության դասեր է առնում Մեսսեից, կլասիկ ողբերգության գծով նրա հետ պարապում է Սիլվենը, կլասիկ կոմեդիայի գծով՝ Լոֆիյենը, երկուան էլ «Կոմեդի Ֆրանսեզի» անվանի դերասաններ:

Սակայն շուտով գլուխ է բարձրացնում այնպիսի մի հանգամանք, որով մաքով արվեստի ոլորտներում սավառնող երիտաւարդի միտքը առաջին պահ չէր էլ զբաղվել. պետք էր վճարել շորս ուսուցիչների և ապրել Փարիզի նման մի քաղաքում, ապրել ոչ թե ծնողներից ստացված դրամով, այլ խնայած միջոցներով:

Հաշվի առնելով նրա անվիճելի ընդունակությունները և կատարելագործվելու բուռն ձգտումը, ստուդիայի դիրեկցիան որոշում է հեռավոր Հայաստանից եկած երիտասարդին

Հնարավորություն տալ ձրիաբար շարունակելու կրթությունը։ Դա զգալի թեթևություն էր անշուշտ, բայց դեռ ելք չէր ծանր դրությունից. պետք էր հոգալ և ապրուստի մասին։ Իսկ ինչպես:

Վերջապես Արմենյանը դիմում է «Բուժոյա նոր» թատրոնի դիրեկտիվին, առաջարկելով իր ծառայությունը ամենահամեստ, բոլորովին շնչին պայմաններով։ Նրան հանձնում են տեխնիկական ռեժիսորի երկրորդ օգնականի պաշտոնը։

Սկսվում են լարված աշխատանքի օրեր, շաբաթներ, ամիսներ։ Օրինակելի բարեխըղձությամբ կատարելով իրեն հանձնված պարտականությունները, նա միաժամանակ իր վրա է վերցնում ղեկավարների աշխատանքների մի մասը, կատարում է դրանք ոչ այնքան հաճոյակատար երևալու, որքան սովորելու, բեմի գաղտնիքներին ծանոթանալու համար։ Նրան նկատում են, նրան վստահում են ավելի ու ավելի բարդ հանձնարարություններ, ինչպես նաև փոքր դերեր մասսայական տեսարաններում։

Նրա մասնակցությունը ոչ միշտ է անցնում սահում. պատահում են և դեպքեր, որոնց

Համար նա խիստ հանդիմանության է ար-  
ժանանում: Այսպես, մի ներկայացման մեջ  
ընդհանուր սրամարտի ժամանակ, թվացող  
իառնաշգոթության պահին շիմանալով ինչ  
անել, ինչով արդարացնել իր ներկայությունը  
բեմի վրա, Արմենյանը, ձևանալով վախկո-  
տի մեկը, մտնում է սեղանի տակ: Հասարա-  
կությունը ծիծաղում է, ուրեմն արարքն ար-  
դարացրեց իրեն: Բայց... խրախուսանքի փո-  
խարեն նաև նկատողության է արժանանում:  
Ինչպես է համարձակվել ինքնազգուիս խա-  
ղով փշացնել դրության դրամատիզմը: Իհար-  
կե, դա վկայում է նրա ակտիվ բնավո-  
րության մասին, բեմի վրա կատարվածի  
հանդեպ անտարբեր շմնալու ցանկությունը,  
բայց այդ պետք է անել փորձերին և ոչ թե  
հանպատրաստի, ներկայացման ժամանակ,  
երբ անսամբլն իր կողմից նախապատրաստ-  
ված չէ որևէ վերաբերմունքով արդարացնե-  
լու դա: Ի՞նչ կատացվի, եթե ամեն մի դերա-  
սան փորձի հետևել նրա օրինակին: Ահա՝  
թե ինչ. կարեոր մի կանոն է հայտնագործում  
նա, ուրեմն դերասանն ազատ է ստեղծագոր-  
ծելու փորձերի ժամանակ, բայց ներկայաց-  
ման պահին նա չպետք է նոր հղացում թույլ

տա միզանսցենի մեջ առանց ոեժիսորի համաձայնությունն առնելու:

Յրանսիական առաջավոր թատրոններում տիրող այդ խիստ կարգապահությունը հիմա է իմաստավորվում հեռավոր Կովկասում իր բեմական մկրտությունն ստացած երիտասարդ գերասանի համար։ Մուտքից նույնիսկ փոքր-ինչ ուշանալու դեպքում դերասանը ոչ թե նկատողության էր արժանանում, այլ դրամական տույժի էր ևնթարկվում։ Անխնապատճվում էր ամենաչնչին անփութությունը, ամենափոքր թերությունը։ Խոսք անգամ չէր կարող լինել հուշարարի մասին։ դերասանը պետք է այնպես անգիր իմանար իր դեռը, ինչպես երաժիշտ կատարողն է իմանում, երբ նա բեմ է բարձրանում։ Բայց Արմենյանն օրինակելի առաջադիմություն է ցուցաբերում ոչ միայն ներկայացումը տեխնիկապես վարելու, այլև ստեղծագործական հարցերում։

Սկզբում անվատահ, ապա ավելի ու ավելի համարձակ կերպով է նա մասնակցում փորձերին, խորհուրդներ, ցուցումներ է տալիս դերասաններին, օգնում է ոեժիսորներին՝ երբեմն կարճ պահերով փոխարինելով

նրանց: Սեզոնի վերջում դիրքեկտորը կանչում է նրան ու հայտնում, որ հաջորդ սեզոնի համար նա նշանակվում է երկրորդ ռեժիսոր՝ բավական պատկառելի աշխատավճարով:

Այդ ժամանակ է ահա, որ նա իմանում է Թիֆլիսի «Դրամատիկ ընկերության» վարչության հրավերի մասին: Ի՞նչ անել. մնալ Փարիզում և կատարելագործել, հիմնովին տիրապետել ռեժիսորական ու դերասանական արվեստին, թե՛ վերադառնալ հայրենիք, ծառայել հարազատ բեմին:

Վարանումներին վերջ է տալիս սիրելի ուսուցիչը՝ Պոլ Մունեն: Իհարկե գնալ, իհարկե այժմյանից իսկ ծառայել մայրենի բեմին: Զէ՞ որ դրա համար է նա ստացել մասնագիտական կրթություն:

Եվ մերժելով իրեն առաջարկված գայթակրոշին պայմանները՝ Արմեն Արմենյանը 1902 թվականին վերադառնում է Թիֆլիս:

## 7

Այսուեղ նա զարմանքով իմանում է, որ ոչ միայն պատրաստի խումբ չկա, այլև եղած դերասաններն էլ ցրվել են տարբեր քաղաքներ՝ գործելու փրկնց նախաձեռնությամբ:

Բայց ձեռքերը ծալած նստել շեր կարելի հարկավոր էր թեկուզ մասնավոր ներկայացումներ կազմակերպել:

Ինչո՞վ սկսել, ի՞նչ պիեսով, ի՞նչ դերով հանդես գալ առաջին անգամ։?

Արմենյանն ընտրում և թարգմանում է Ֆրանսուա Կոպաֆեի «Կրեմոնայի վնագործը» մեկ արարվածով դրաման, որը նրան լավ ծանոթ էր Փարիզից։ Այս դրամայի մեջ մասնակցելու էր դերասանուհի Օլգա Մայսուրյանը։ Խմբի մյուս անդամների համար ընտրվում է Սունդուկյանի «Գիշերվա սաբրը խեր է» կատակերգությունը և մի վողեվիլ՝ «Մկնիկը»։ Այս վերջին բեմադրություններին մասնակցելու էին Սաթենիկ Զմշկյանը, Վարդուհի Մելիքյանը, Արշակ Հարությունյանը, Գեղեռն Միրաղյանը և ուրիշներ։

Երեկոն վատ շի անցնում։ Մասնավորապես աշքի է ընկնում ինքը՝ Փարիզից նոր վերադարձ Արմենյանը։ Առաջին պիեսի ներկայացումը ավարտելուց հետո, ընդմիջումին շատերի հետ նրա զարդասենյակն է մտնում և Գաբրիել Սունդուկյանը, շնորհավորում է և, ի միջի այլոց, խորհուրդ է տալիս նրան մտածելու Ֆրանցի դերի մասին։

Այդ խոսքերը ցնցող ազգեցություն են գործում երիտասարդ դերասանի վրա, ստիպում նրան լրջորեն խորհելու առաջին պահ աւարօրինակ թվացող այդ առաջարկության մասին։ Կարո՞ղ էր արդյոք հայ մեծանուն դրամատուրգը պատկերացնել, որ ինքը մարդարեանալու է, որ տարիներ հետո Արմեն Արմենյանի լավագույն դերերից մեկը լինելու էր հենց Ֆրանց Մոորը։


Քաջալերվելով առաջին ներկայացման հաշողությունից, Արմենյանը թարգմանում և բեմադրում է Ալֆրեդ դը Մյուսսեի «Վաղաժամ» վճիռա կոմեդիան, բարոնեսսայի դերը Հանձնելով Սաթենիկ Զմշկյանին։ Շնորհիվ բեմադրողի ջանքերի, այս ներկրորդ ներկայացումը ևս ջերմորեն է ընդունվում հասաւակության կողմից։

Այսպես է սկսվում Արմեն Արմենյանի արտիստական բուն գործունեությունը։

Նույն սեղոնում բեմադրած պիեսների մեջ մենք ոչ դասական, ոչ էլ ազգային ինքնուրույն դրամատուրգիայի նմուշներ չենք գըտնում. դրանք մեծ մասամբ փոքր ֆորմայի գործեր են, առավելապես ֆրանսերենից թարգմանված կոմեդիաներ։ Պատճառն ինք-



Յուսոսոս, «Հիմար»



Մամղիկ՝ «Սատանա»

նին հասկանալի է. Արմենյանը հանդես է դալիս ոչ թե կազմակերպված մի խմբում, այլ պատահական դերասանների հետ, երբ ոեպերտուարը որոշվում է մասնակիցների նախասփրությամբ, պիեսում նրանց զբաղվածության հանգամանքով։ Կա երկրորդ, ոչ սակավ կարևոր նկատառում ևս. այդ կոմեդիաներին նա բավականաշափ ծանոթ էր Փարիզից, և ընդհակառակը, նա զգուշանում է հանդես գալ լուրջ, պատասխանատու դերով կամ բեմադրությամբ. այսպես թե այնպես բեմական փորձ նա դեռևս քիչ ունի։

Մամուլի կարծիքը նրա բեմադրությունների և խաղի մասին ընդհանուր առմամբ դըրական է, քաշալիրական։ Հանձին Արմենյանի, թատերական քննադատությունը տեսնում է կուլտուրական մի արտիստի, որ հավասարաշափ լավ է և որպես դերասան, և իբրև ոեժիսոր։ Բայց արվում են նաև դիտողություններ, ըստ որում այս անգամ ևս բավականաշափ լուրջ։ Արտիստն ինքն այդ քննադատությունից հանում է միանգամայն ուսանելի մի եզրակացություն։ տասը տարի առաջ նրա խաղն ինքնաթուիս էր, անսեթևեթ, չերմ։ այժմ անմիջականությունն անցել է

Ետին պլան, տեղի տալով գերասանական տեխնիկայի ցուցադրմանը, այլ կերպ ասած՝ նա հիմա ներկայացնում էր և ոչ թե ապրում բեմական կյանքով։ Հարկավոր էր, ուրեմն զրանք հանդես բերել չափի մեծ զգացումով, չզոհաբերելով մեկը մյուսին։

Նույն թատերական տարին նշանավորվում է նաև մեկ այլ հիշարժան իրադարձությամբ։

Դեռ Փարիզում եղած ժամանակ նա մտածում է Կովկաս վերադառնալուց հետո իրեն շրջապատել բացառապես երիտասարդ ուժերով, նրանց օգնությամբ գործի վերածել իր իղձերն ու ծրագրերը։ Թիֆլիս հասնելով՝ նա ծանոթանում է Ռուզան կեղծանունը կրող մի օրիորդի հետ, փորձում է նրա ուժերը մեկերկու գերերում և համոզվում, որ իրոք Կատարինե Դանդուրյանը (ծնողներից գաղտնի խաղալու համար նա վերցրել էր Ռուզան մականունը) լուրջ ապագա է խոստանում։ Հետագայում Դանդուրյանը, որին տրվում է Գուրյան արտիստական ազգանունը, իր ստեղծագործական կյանքը ոչ միայն ամբողջովին կապում է Արմենյանի հետ, այլև դառնում է նրա կինը։

---

Դա ռեսպուբլիկայի այժմյան ժողովրդական արտիստուհի Կատարինե Դուրյան-Արմենյանն է:

8

Ամուսնությունից անմիջապես հետո, որոշած լինելով տուրնեի դուրս գալ դեպի Հայաստան, որտեղ նա առաջին անգամ պետք է ոտք դներ, Արմենյանը հրավիրում է Սաթենիկ Զմշկյանին, Վարդան Միրզոյանին և Պողոս Ռշտունուն: Այս անգամ ևս խմբի փոքրաթիվ լինելն է պայմանավորում ռեպերտուրը. դարձյալ փոքր փորմայի պիեսներ, դարձյալ թարգմանություններ:

Երջագայությունը սկսվում է Երևանից:

Իր մեմուարներում Արմենյանը, վերհիշելով այդ առաջին ներկայացումները, ցավով և ափսոսանքով է արձանագրում այն հանդամանքը, որ գրանք հարկ եղած ընդունելությունը չեն գտնում կամ պարզապես անհաջող են անցնում: Նա այդ բացատրում է նրանով, որ ֆրանսիական նուրբ ու սրամիտ պիեսները, ինչպես և աշխալու, դինամիկ խաղարկությունը չեն ընդունվում Երևանի թատերական հասարակության կողմից: Եվ

քանի որ նույն այդ ներկայացումները չերմ  
արձագանք են գտնում Ալեքսանդրապոլում,  
Հեղինակին կարծես թե բերում են այն եղ-  
րակացության, որ թատերամեր հասարակու-  
թյունը Ալեքսանդրապոլում ի բնե ավելի աշ-  
խույժ է, սրամիտ, հումորի զգացում ունե-  
ցող:

Այս միտքը հազիվ թե կարելի լինի ճիշտ  
համարել, համենայն գեպս, այն չի բա-  
ցատրում սառն ընդունելության բուն պատ-  
ճառը, որը, գոնե այդպես է թվում մեզ, կա-  
յանում էր առաջին հերթին օտար, անծանոթ  
կյանք ու կենցաղ պատկերող պիեսների մեջ,  
որոնք քիչ բան էին ասում նրա հոգուն ու  
սրտին: Հասարակությունը կարոտ էր իրա-  
կան, կենսաթրթիռ, ժամանակակից կյանքը  
պատկերող ներկայացումների: Հետագայում  
ինքը՝ Արմենյանն էլ ձեռնարկելով ինքնու-  
րույն պիեսների բեմադրությանը, պետք է  
համոզվեր դրանում:

Ալեքսանդրապոլից հետո խումբը մեկնում  
է Ղարս: Այստեղ ևս ներկայացումները լավ  
ընդունելություն են գտնում:

Վերագառնալով Թիֆլիս, խումբը տալիս է  
հրկու ներկայացում, որոնք դարձյալ չերմ

ընդունելություն են գտնում թե Հասարակության և թե մամուլի կողմից: Թերթերից մեկը գտնում է, որ Արմենյանը մի տարվա մեջ ահագին քայլ արեց դեպի առաջ՝ ազատվելով խաղաղկման ֆրանսիական մաներաներից: Մյուսն արձանագրում է այն հանգամանքը, որ նախորդ տարվա համեմատությամբ նա բարեփոխություններ է կատարել իր դերակատարության մեջ, թողել է «ֆրանսիական» «այն բառաձգողությունները, որոնք խորթեին մեր հասարակության լսողության համար»:

Այդ վերաբերմունքը և ընդհանրապես դրական գնահատականը թեավորում է Արմենյանին: Ուրեմն նա կարող է շարունակել շրջագայությունները:

Եվ. ահա, ընդամենը հինգ հոգուց բաղկացած գերասանական այդ կոլեկտիվը, զգեստներից բացի համարյա ոչինչ շունչնալով, բայց ոգևորված սիրած արվեստին և նրա միջոցով էլ ժողովրդին ծառացնելու գաղափարով, — ճանապարհ է ընկնում դեպի Հյուսիսային Կովկաս՝ ներկայացումներ տալով Գանձակում, Դերբենդում, Արմավիրում,

Ժամերով լսեն ռեժիսորի տված ցուցմունքները, և ի՞նչն է այստեղ գովելի, որ գործի մեջ մտած ու նույն հոանդով աշխատում են հասարակության բոլոր խավերի մարդիկ, առանց որևէ խտրության... Անդրկովկասից եկած մի հայի համար այս բոլորը նոր է և օտարոտի... Բայց հենց դրանումն է գործի այնքան հաջող առաջ գնալու գաղտնիքը: Թող շզարմանան ընթերցողներս, եթե ասեմ, թե այստեղ 25-ական տարվա սիրողներ կան, որոնք, ինչպես և ամբողջ խումբը, ընդունակության կողմից բնավ ետ չեն մնում դերասանական խմբից»:

Բացառիկ հաջողությամբ է անցնում ամբողջ այս թատերական սեղոնք: Այդ ամիսների ընթացքում մոտ տասներկու անգամ մեծացած խումբը տալիս է վաթսուն ներկայացում, բևմագրելով 25 սիրես: Դրանցից հիշատակենք Կոպակեի «Կրեմոնայի վնագործը», Նեմիրովիշ-Դանշենկոյի «Տոնավաճառը», Նայդենովի «Վանյուշշկինի զավակները», Կոպակեի «Թագի համարը», Պարոնյանի «Պաղտասար աղբարը», Զուբարյանի «Սանտուխտը» և այլն:

Արմենյանն իր հիշողություններում մեծ

շերմությամբ է խոսում ժողովրդի ընդերքից  
ելած բնածին այդ տաղանդների, սիրող գե-  
րասանների մասին, գտնելով, որ նրանցից  
մի քանիսը, չունենալով ոչ մասնագիտական  
կրթություն, ոչ էլ նույնիսկ փորձ, ետ չեխն  
մնում պրոֆեսիոնալ գերասաններից: Դրանց  
մեջ առանձնապես աշքի են ընկնում Կարա-  
պետ Թիթրյանը, ի. Զարխյանը, Փեշեքերյա-  
նը, Պալիկը, Հետագայում վաստակավոր ար-  
տիստ Տիգրան Այվազյանը և ուրիշներ:  
Դրանցից մի քանիսը որպես արտիստ արդեն  
ձևավորվել էին դեռևս Աղամյանի օրոք (Թի-  
թրյան, Զարխյան):

Ոգերված այդ հաջողությամբ՝ Արմենյանը  
մի երկրորդ անգամ էլ է այցելում Նոր-Նախ-  
իջևան, գարձյալ մի ամբողջ սեղոն գործելու  
համար: Այս անգամ նրա նախաձեռնությամբ  
կազմված խմբի մեջ մտնում են գերասանու-  
թիներ Զարելը, Սաթենիկ Աղամյանը, Արուս-  
յակը (Լիզիկ Զմշկյան), գերասաններ Վար-  
դան Միրզյանը, Հ. Օհանյանը և Զարեհը:  
1905 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև  
1906 թվականի մարտի 15-ը խումբը, տե-  
ղական ուժերի մասնակցությամբ, իհարկե,  
տալիս է ավելի քան 50 ներկայացում: Զգա-

լի փոփոխություն է նկատվում ռեպերտուարի մեջ: Թեթև կոմեդիաները թեև չեն անտեսվում, բայց մասամբ տեղի են տալիս եվրոպական կլասիկների գործերին: Զգալի տեղաշարժ է կատարվում սակայն ինքնուրույն պիեսների բեմադրության գործում: Հիշատակենք Շիրվանզադեի «Պատվի համարը», Պարոնյանի «Պաղտասար աղբարն» ու «Մեծապատիվ մուրացկանները», Մուրացանի «Ռուզանը», Թառայանի «Արշալույսինը», Զուբարյանի «Մարին» և այլն: Թարգմանական պիեսներից պետք է հիշատակել «Ավագակները», «Երևակայական հիվանդը», «Ակամա բժիշկը», «Սկիլյան սափրիչը», «Հաննելեն», «Խորասուզված զանգը», «Նորաշիարհը», «Ուրվականները», «Դոկտոր Շտոկմանը» և այլն:

Մամուլը դրական է գնահատում արտիստական խմբի այս սեղոնում կատարած աշխատանքը:

«Ծնորչիվ դրամատիկ ընկերության միահամուռ ջանքերի ու սերը դեպի գործը, սեղոնն անցավ հաջող,— կարդում ենք «Պриазовский край» թերթի 1906 թ. մարտի 8-ի համարում: — Այնտեղ շկային «փայլում

աստղեր», բայց կար անսամբլ, կար կոլեկ-  
տիվ աշխատանք, այնտեղ բացակայում էր  
եսականությունը, փառամոլությունը և ան-  
ջատ խմբակայնությունը։ Դեկավարությունը  
տանում էր անաշառ, առանց վիրավորելու  
որևէ մեկի արժանապատվությունը։ Եվ ի՞նչ։  
Արդյունքը հիանալի ստացվեց։

## 9

Դառնանք 1905 թվականի ռեոլյուցիացի  
նախօրեին հայկական գյուղերում կատարած  
նրա շրջագայություններին, որոնք վկայում  
են դերասանական այդ կոլեկտիվի անձնա-  
զո՞չ աշխատանքի, ժողովրդի հանդեպ ունե-  
ցած պարտքի խորը գիտակցության մասին։

Ինչպես որ ամպրոպից առաջ օդն անսովոր  
թանձրանում է, ծանր թուխակերով պատած  
երկինքը ասես իշնում, կախվում է ցած, շըն-  
չելը դառնում է անհնար և ողջ բնությունը  
լարված սպասում է վերահաս փոթորկին,  
տենչում է րոպե առաջ տեսնել կոյցծակի  
առաջին հուրհրատումը, — այնպես էլ ծանր,  
մղձավանջային էր քաղաքական կյանքը 1905  
թ. նախօրյակին։ Վերահաս փոթորկից խու-  
սափելու համար ցարիզմը տրորում, ոտնա-

Հարում էր փոքր ժողովուրդների տարրական իրավունքները: 1901 թ. սլետության կողմից գրավվում են եկեղեցական կալվածքները, 1904 թ. փակվում են հայկական դպրոցները, քաղաքներում և գյուղերում դրավվում են դպրոցապատկան շենքերը և եկամուտ բերող կալվածքները, 1500 տարվա գիր ու գրականություն ունեցող մի ժողովրդի զրկում են մատաղ սերնդի գրաճանաչ զարձնելու հնարավորությունից: Հայ ժողովրդին հասած այդ հարվածը ծանր են ապրում գրականության ու արվեստի ներկայացուցիչները: Նրանք իրենց պարտքն են համարում մտնել ժողովրդի ամենալայն խավերի մեջ, վառ պահել գրականության ու արվեստի սերը, կորով ներշնչել լքվածներին ու թուլերին, ըմբռատների մեջ ավելի և բորբոքել մոտալուտ ազատության տենչը:

1905—1907 թթ. ուսուցուցիայի տարիներին դեպի լույսն ու գիտությունն արթնացած ձգտումները լայն շափեր են ընդունում առաջին հերթին բանվորների մեջ, որոնք արտահայտվում են ինքնակրթության և ինքնագործունեության զանազան խմբակների ըստ-աեղծումով, գրական երեկոներ, թատերական

ներկայացումներ կազմակերպելով և այլն:  
Խոսելով այդ ներկայացումներին կենդանի  
կերպով արձագանքող բանվոր հանդիսական-  
ների մասին, Սուրեն Սպանդարյանը դրում է.

«Ժողովրդական տան դահլիճը բառացի  
լեփ-լեցուն էր լինում, այնպես որ «ասեղ գր-  
ցելու տեղ չէր մնում», և բանվորական հա-  
սարակությունը լարված ուշադրությամբ հե-  
տևում էր, թե ինչ է արվում ու խոսվում բեմի  
վրա. Սիրած հերոսի «ամեն մի հաջող խոսք»,  
ոեպլիկա հավանություն էր առաջացնում  
հասարակության մեջ, իսկ «բացասական»  
սիրի ամեն մի երեսով ուղեկցվում էր զայ-  
րագին թնդյունով... Այնտեղ խաղացող դե-  
րասաններն զգում էին, որ փրենց առջև  
կտնվում է մի հատուկ առւդիտորիա, որ  
այստեղ կարևորը մանրամասնությունները  
չեն, ոեժիսորական հրաշքները չեն, այլ իր  
դերով համակվելը, հանդիսականի՝ հոգին շո-  
շափել կարողանալը, իսկ այդ հոգին հեշտ էր  
ալեկոծել. Հարկավոր էր միայն լավ խոսքեր  
առել ազնիվ, անկեղծ ձայնով: Իսկ անտ-  
րակտներին տեղի ունեցող վեճերը, խոսակ-  
ցությունները տեսածի ու լսածի առթիվ, իսկ  
այն չերմ, բուռն շնորհակալությունը ժողո-

վըրդական բեմի գործիշներին, իսկ այն լուրջ,  
ներհուն վերաբերմունքը դեպի ռեպերտուա-  
րը, — այս բոլոր փաստերը ոգևորում ու ամ-  
րապնդում էին կուլտուր-լուսավորական գոր-  
ծի աշխատանքներին, հոգեկան ամուր կապ  
էին հաստատում գերասանների ու հանդի-  
ականների միջև»:

Այդ տագնապալի օրերին է, որ Արմենյանի  
ղեկավարությամբ թիֆլիսում գաստրոլներ  
տվող գերասանական խումբը հրավեր է  
ստանում Ղարսից, տեղական սիրողների հետ  
մի շարք ներկայացումներ տալու փակված  
հայ դպրոցների փոխարեն գյուղերում գաղտ-  
նի կերպով բացվելիք դպրոցների օգտին:  
Խումբն անմիջապես ընդհատում է իր ներ-  
կայացումները և 1904 թվականի ղեկտեմբե-  
րի սկզբներին մեկնում Ղարս:

Ահա թե ինչ է պատմում այդ շըշագայու-  
թյունների մասին ինքը՝ Արմենյանը.

«Երբ ներկայացումների հասույթով ձեռք  
բերված դպրոցական գոթերը, տեսդակները  
և այլ անհրաժեշտ իրերը հանձնելու համար  
անձամբ այցելեցի շըշագա գյուղերը, ինձ  
ապշեցրեց այն, թե ինչքան, այնուամենայ-  
նիվ, զորեղ է իրենց երեխաներին մայրենի

Հեղվով կրթություն տալու հաստատակամությունը և թե ինչպիսի խորամանկ հնարքներ է ներշնչում կամքը շինականին: Նրանք գրպարցական շենքերը վերածել են պահեստների, իսկ պարապմունքների ժամանակ գյուղի ծայրին կանգնեցնում են Հերթապահ պահակ, որը, հենց որ նկատում էր զրսից եկող որևէ «կասկածելի» մարդու, իսկույն նշան էր տալիս և «դպրոցը» իսկույն վերափոխվում էր «սարայի»:

Դարսում, ինչպես և շրջակա գյուղերում՝ ներկայացումներ տալուց հետո խումբն անցնում է Ալեքսանդրապոլ, Այստեղ Վրթանես Փափաղյանի «Ժայռ» պիեսը բհմադրելուց հետո նրանք որոշում են նույնը ներկայացնել նաև գյուղերում: Առաջին ներկայացումը տրվում է Ղփչաղ գյուղի Հառջա վանքի լոնդարձակ դահլիճում, եկեղեցական ինչ-որ տոնի առթիվ շրջագա բոլոր գյուղերից հավաքված հսկայական բազմության առաջ: «Պետք էր տեսնել,— վերհիշում է Արմենյանը,— թե գյուղացիք, որոնք առաջին անգամ տեսնում էին մի լուրջ, «իսկական ներկայացում», որը սակայն, ինչպես ասացին, «կարծես ներկայացում չէր, այլ մեր ամեն»

օրյա կյանքի պատկերն էր», ինչպիսի լարված, լուռ ուշադրությամբ հետևում էին պիեսին, չուզենալով որևէ բառ բաց թողնել, իրբեմն միայն թեթև հառաջանքներ արձակելով»:

## 10

1906 թվականի ամռանը, օգոստի վելով հարմար առիթից, Արմենյանը և Գուրյան-Առմենյանը մի կարճ ժամանակով մեկնում են Եգիպտոս, ավելի զբոսանք կատարելու, քան ներկայացումներ տալու նպատակով: Բայց գեռես Ալեքսանդրիա նոր ոտք դրած, ընդառաջելով տեղական սիրողների ցանկությանը և նրանց հետ միասին՝ մի ներկայացում են տալիս, որի մասին մամուլում չերմ խոսք է ասում Երվանդ Օտյանը: Այնուհետև նույն փորձը նրանք կրկնում են Կահիրենում, այս անգամ տալով ութ ներկայացում, այդ թվում՝ Շիլլերի «Ավազակները»:

Այս դրաման Արմենյանն առաջին անգամ բեմադրել և ինքն էլ Ֆրանցի դերով հանդես էր եկել Նոր-Նախիջևանում, երկրորդ այցելության ժամանակ: Ինչպես երևում է, Ֆրանցի կերպարի նրա մեկնաբանությունը



Յուանց «Ավագակներ»



Արմենիանների ընտանիքը

այդ օրերին դուրս չի եկել թանձրացած մի  
շարագործ պատկերելու տրադիցիոն եղա-  
նակներից և ստեղծագործական ոչ առանձին  
մի տառապանք է պատճառել արտիստին,  
ոչ էլ բերկրանք: Թերևս միայն սրել է նրա  
ուշադրությունը այդ կերպարի վրա, որ գրա-  
վել, հուգել է բոլոր մեծ ողբերգակներին:  
Արմենյանը, իհարկե, չէր կարող մոռացած լի-  
նել Սունդուկյանի՝ իր անդրանիկ բեմելին  
ասած խոսքը՝ Ֆրանցի դերով հանդես զա-  
լու մասին: Բայց ի՞նչ նկատի ուներ անվանի  
գրամատուրքը, իր արտիստական խառնված-  
քի ո՞ր հատկանիշներով ու կողմերով պետք  
է մոտենար այդ կերպարին, որպեսզի մեկ-  
նաբանությունը ինքնատիպ լինելուց բացի  
նաև ճշմարիտ լիներ, ինչ որ արվեստի  
առաջնակարգ խնդիրն է եղել և է':

Արմենյանը մինչ այդ շատ ֆրանցներ չէր  
տեսել, տեսածներն էլ առանձին հետաքրք-  
րքը ություն չէին ներկայացրել: Ուրեմն մնում  
էր սկսել գրական աղբյուրների ուսումնասի-  
րությունից, բայց առաջին հերթին, իհարկե,  
դրամայից:

Եվ ահա սեղանի վրա դնելով գրամայի  
բնագիրն ու հայերեն, ֆրանսերեն, ոռւսերեն

---

թարգմանությունները, նա սկսում է կարդալ, խորամուխ լինել տեքստի մեջ։ Առաջին հարցը (ասենք ուղղակի՝ միակ հարցը), որ նրան հետաքրքրում է, հետևյալն է. ի՞նչն է մղում Ֆրանցին շարագործության, ի՞նչ աղբյուրից է սնվում մարդկանց և մարդկության նկատմամբ կուտակած նրա մաղձը։

Իր հուշերում արտիստը պատմում է մի պատահական գյուտի մասին, որը և օգնում է նրան տարակուսանքի արահետներից ստեղծագործական լայն ճանապարհ գուրս գալու։ Ֆրանսիական թարգմանության մեջ, առաջին նշանավոր մենախոսություններից հետո, նախքան Ամալյայի մուտքը, նրա աշքին է ընկնում այսպիսի մի ֆրազ. «Ավազ, երջանիկ հոգիների համար հեշտ է առաքինի լինել»։ Մի նախաղասություն, որ չկար գերմաներին բնագրում, ինչպես և հայերեն և ռուսերեն թարգմանությունների մեջ։

«Այնպես ոգևորեց ինձ այդ գյուտը, որ ուրախությունից սկսեցի սենյակիս մեջ թռչկոտալ։ Ուրեմն Ֆրանցը ի բնե շար չէ, այլ մարդիկ են նրան շար դարձրել, մանկությու-

նից սրսկելով նրա հոգու մեջ նախանձի,  
մաղձի, չարության թույնը»:

Եթե նույնիսկ համաձայնենք արտիստի  
հետ և պատահականորեն գտնված ֆրազը  
բանալի համարենք, ապա դա մեր փնտրած  
բանալին չէ կրկնակի պատճառաբանու-  
թյամբ։ Նախ, որ դա «Ավագակների» հեղի-  
նակին չի պատկանում, այլ նրա ֆրանսիա-  
ցի թարգմանչին, որ անթույլատրելի կերպով  
աղատ վարվելով, իր կողմից մի ամբողջ  
ֆրազ է ավելացրել և ապա, որ այդ ֆրազը  
ինքնին գեռ ոշինչ չի բացատրում։ Հարց կա-  
րող է ծագել, իսկ ինչո՞ւ նա երջանիկ չէ, ո՞վ  
է կանգնած նրա բախտի ճանապարհին։ Բայց  
այս հարցի պատասխանը բավական աներկ-  
ամիտ տալիս է հենց ինքը՝ հերոսը. որովհետեւ  
նա հոր անդրանիկ զավակը չէ, որովհետեւ  
նա՛ չի տիրանալու զառամյալ ծերուկի հա-  
րբատությանը։

Այս չի խանգարում, իհարկե, որ արտիստը  
ճիշտ հասկանա կերպարը։ Մի կողմ նետե-  
լով ֆրանցին ֆիզիկագես նաև հրեշ պատ-  
կերելու անլուրջ մոտեցումը, նա ձեռնամուխ  
է լինում ամենակարևորին՝ կերպարի ներ-  
քին էության բացահայտմանը։ Այո՛, և՛ Յա-

գոյի, և՝ նրա կրկնակ՝ Ֆրանցի շարության  
պատճառը երկնային ոլորտներում չէ, այլ  
երկրի վրա: Զենք տարակուառմ բնավ, որ  
Արմենյանն իր նոր մեկնաբանմանը կհաս-  
ներ նաև առանց այդ օտարամուտ ֆրազի  
օգնության, կհասներ բոլոր դեպքերում, քա-  
նի որ նրա մտքերի ընթացքը անշեղորեն դե-  
պի այդ կողմն էր ուղղված:

Ինչպե՞ս է ընդունվել կերպարի այդպիսի  
մեկնաբանությունը. մամուլի կողմից: Հա-  
մենայն դեպս՝ ոչ անվերապահ հիացումով:  
Փորձելով Ֆրանցին ներկայացնել ոչ թե շա-  
րության անոթ, այլ կենդանի մարդ, Արմեն-  
յանը, որոշ թերթերի կարծիքով, ընկնում է  
շափազանցության մեջ, շեշտը դնում է նրա  
ապրած ներքին դրամայի վրա, նրա հոգեկան  
տվայտանքների վրա և ասես թե փորձում է  
(մասամբ, իհարկե) արդարացնել իր հերո-  
սին, կամ թե, համենայն դեպս, որոշ կարեկ-  
ցանք առաջացնել դեպի նա: Ռեցենզենտը  
դժվարանում է այդպիսի մեկնաբանությունը  
մինչև վերջ տրամաբանական համարել, թեև  
միաժամանակ դրվատում է արտիստի ինք-  
նուրուցն մոտեցման հարցը: «... Ֆրանց Մո-  
ռորի այնքան դժվարին դերը մասամբ անհաս-

կանալի մնաց, — ասում է նա: — Արմենյանը կներկայացներ կատարելապես ֆրանսիական դպրոցին ստեղծած տիպարը: Վերջին արարվածին մեջ մղձավանջը, զիղջը, ահավոր դատաստանեն սարսափը ստեղծագործություններ էին, այնպիս որ Աթենքի Արքայական թատրոնին դերասաններեն մին, որ ներկա էր, հիացումով հայտնեց թե՝ անկրնա ամբողջ աշխարհի առջև բարձրագլուխ պարծիլ»:

Արմենյանի մեկնաբանության այդ կողմի վրա է կանգ առնում նաև մի այլ թերթ:

«Ֆրանցի դժվարին դերին մեջ Արմենյանն իր տաղանդին բոլոր հատկություններն ցույց տվավ... Մինչև այսօր Ֆրանցը ատելություն հրավիրած էր իր կուա, Արմենյանի Ֆրանցը արգահատանք, կարեկցություն կրստեղծե իր շուրջը»:

Կարեկցություն, Ֆրանցը... Բայց այդ նշանակում էր բոլորովին շհասկանալ հեղինակին, միանգամայն սխալ պատկերել նրա ստեղծած բացասական կերպարը: Ֆրանցին երկրային մարդ դարձնելը ոչ մի դեպքում չէր կարելի հասցնել այնտեղ, որպեսզի այն տպավորությունը ստեղծվեր, թե արտիստը

մտածում է ժամանակին և միջավայրին վերագրել նրա արարքները, այսինքն, ի վերջո, արդարացնել նրա շարագործությունները:

Շատ դերասաններ Ֆրանցին պատկերել են տգեղ, սապատավոր, նույնիսկ մի ոտքը շարունակ քարշ տվող: Արմենյանը ճիշտ էր վարվում, երբ մերժում էր այդպիսի գոհհկացումը, նա նույնիսկ Ֆրանցին ավելի գեղեցիկ է պատկերացնում, քան նրա անդրանիկ եղբայրը: Այդ նրա իրավունքն էր, իհարկե, թեև դրամայի հեղինակը, փակագծում ասենք, ճիշտ հակառակ ցուցում է տալիս: Բայց անվիճելիորեն բացասական կերպար ներկայացնելիս շէր կարելի չեղոք գիրք բռնել, հասարակությանը թողնել մեղադրելու կամ արդարացնելու գործը: «Դերակատարը լինելու է բացասական գործող անձի դատխազը, իսկ հանդիսականը՝ դատավորը», — սիրում էին ասել հին դերասանները: Այդ շինշանակում, սակայն, որ դերասանը պետք է դուրս գա կերպարից, նրան շար ներկայացնի, առանց այդպիսին լինելու բեմի վրա: Ո՞ւ ճշմարիտ արտիստի խնդիրն այս դեպքում շատ ավելի բարդ է. նա պետք է ապրի բեմի վրա, բայց այնպես, որ կերպարը մերկաց-

նելու, դատապարտելու նրա տենդենցը բխի իբրև եզրակացություն: «Սակայն գերասանդատախազը այնպիս պետք է թաքնվի, ծպտվի գործող անձի մեջ, որ երբեք հանդիսականը խաղի ընթացքում շղգա նրա ներկայությունը», — ավելացրել է մեր մեծ գերասան Հովհաննես Աբելյանը: Դերասանը, այլ կերպ ասած, բեմում երբեք կոպտությամբ շպետք է խախտի գերակատարի և կերպարի նույնացման պատրանքը:

Վերցնենք այնպիսի մի հմայիչ արտիստի, որպիսին է Հրաչյա Ներսիսյանը: Առաջին իսկ հայացքից նույնիսկ զարմանալի կարող է թվալ, որ նրան վստահվում է Էլիզբարովի նման մի դեր: Եվ սակայն այստեղ էլ նա դրսեռում է իր տաղանդի լավագույն հատկություններից մեկը: Նա բեմ է մտնում թե արտաքուստ և թե ներքուստ լիովին կերպարանափոխված, ոչ մի շարժումով, ձայնի ոչ մի ինտոնացիայով «շմատնելով» իրեն, շնչացնելով այն ներսիսյանին, որի ամեն ինչը սիրելի է ու հարազատ, որի հետ մենք սովորել ենք կապել Պլատոն Կրեչետի բարձր ձարդկայնությունը, օթելույի ազնվությունն

ու հավատը, Վահրամ Սպարապետի ուժն ու  
հայրենասիրությունը և այլն։ Նույնը, բառա-  
ցի, կարելի է ասել մեծատաղանդ գերասա-  
նուհի Հասմիկի մասին։ Վասսա Ժելեզնովայի  
դերում նա ապշեցնող հարազատությամբ  
ներկայացնում էր դաժան այդ կնոջ ամբողջ  
բարդ ներքնաշխարհը և միաժամանակ մեր-  
կացնում, ձաղկում նրան, ձաղրում նրա  
ապարդյուն ճիգերը՝ ազատվելու վերահաս  
կործանումից...

Եվ այսպես ուրեմն, այս հարցում, ելնելով  
տրադիցիայի ուժ ստացած հասկացողու-  
թյունների դեմ, Արմենյանն ինքը ծայրահե-  
ղության մեջ է ընկնում, ակամայից հեռա-  
նում էր դրամատուրգի ստեղծած կերպարից։  
Եվ, ի պատիվ արտիստի, պետք է ասել, որ  
նա հաշվի առավամամուկի քննադատությու-  
նը, հետագայում հղկեց և մշակեց այդ դերը,  
Ֆրանցին դարձրեց մի շարագործ, որ օժա-  
ված էր մսով ու արյունով և հենց այդ պատ-  
ճառով էլ սոսկալի, դատապարտելի էր։ Դրա-  
նով էլ հենց նրա ֆրանցը դարձավ հայ բե-  
մում ստեղծված լավագույն Ֆրանցներից  
մեկը։

1908 թվականին Թուրքիայում սուլթան Աբդուլ Համիդի ռազմա-ֆեռդալական միահեծան իշխանությունը փոխարինվեց այսպես կոչված «սահմանադրական կարգով»։ Համիդյան ռեժիմի ժամանակ ոչ-թուրք աղջությունների հետ ազգային անլուր ճնշման ու հալածանքի ենթարկված հայերը ևս հնարավորություն ստացան գոնե կիսաբերան խոսելու իրենց ազգային կուլտուրան վերականգնելու տարրական հնարավորությունների մասին, այն մասին, մասնավորապես, որ իրենք մինչ այդ զրկված են եղել նույնիսկ մայրենի լեզվով ներկայացումներ տալու իրավունքից։ Այժմ, հեղաշրջումից հետո, կարծես թե բարենպաստ պայմաններ ստեղծվեցին զրահամար, և հենց միայն այդ բերկուալի ավետիսը ոգեսրեց, աշխուժությամբ համակեց հայ մտավորականությանը ինչպես Թուրքիայում, նույնպես և Ռուսաստանում։

Նույն թվականին ամռանը Հովհաննես Արելյանը և Արմեն Արմենյանը միտք հղացան կազմելու միացյալ թատերախումբ, նըսպատակ ունենալով գործել ոչ միայն Կով-

կասում, այլև, գլխավորապես, Թուրքիայում։  
Կազմակերպական և տնտեսական պարտա-  
կանություններն իր վրա վերցրեց Արելյանը,  
իսկ գեղարվեստական մասի զեկավարությու-  
նը՝ Արմենյանը։ Որոշ նախապատրաստական  
աշխատանքից հետո ձեռք բերվեցին նյութա-  
կան միջոցներ, ոեպերտուարի հետ որոշվեց  
և խմբի կազմը։ Հիմնական ոեպերտուարի  
մեջ մտնելու էին Շիրվանղադեփի «Պատվի-  
համարը», Շիլլերի «Ավաղակները», Շեքսպի-  
րի «Օթելլոն», Իբսենի «Ժողովրդի թշնամին»,  
ինչպես նաև «Պեպո», «Պաղտասար աղբար»,  
«Տրիլբի», «Դալիլա», «Ապահարզանի սյուր-  
պրիզները» և «Անաղնիվ չեն ծնվում» պիես-  
ները։ Խմբի կազմն էր. Արելյան, Արմենյան,  
Դուրյան-Արմենյան, Բերոյան, Աղյան, Հ.  
Ռոկանյան, Լ. Ալավերդյան, Ղազարյան, տի-  
կին Զարել, օր. Բուրջալյան, Անահիտ, Սո-  
ֆիկ Սարգսյան և ուրիշներ։ Որոշվեց Պոլիս  
զնալ ոչ թե ծովով, այլ ցամաքով, ճանա-  
պարհին կանգ առնելով Ալեքսանդրապոլում,  
Ղարսում, Սարիղամիշում, երզրումում, Տրա-  
պիզոնում, մինչև Սամսոն և այստեղ միայն  
նավ նստել։ Դա կօգներ նաև այդ քաղաքնե-  
րում ևս ներկայացումներ տալու։

Թե ինչպես են այդ քաղաքներում կուտուրական կյանքից բոլորովին կտրված հայերն ընդունում այդ ներկայացումները, երևում է հետևյալ անեկդոտանման դեպքից։ Մի անգամ «Պատվի համար» խաղալիս, երբ, վերջին արարվածում, Մարգարիտը խնդրում է հորից ետ տալ թղթերը, իսկ ելիզբարովը շիտալիս և տանջում է ծայրահեղ հուսահատության դռուը հասած աղջկան, — հանդիսականներից մեկը այնպես է տարվում խաղով, որ տեղից վեր թռչելով, մոտենում է բեմին, և, իրեն կորցրած, գոռում է Արելյանի վրա. «Ծո, տո՛ւր, բե, տո՛ւր, տո՛ւր ան թղթերը, ինչո՞ւ կտանջես զավալըմ աղջկան...»։

Խումբը Պոլիս է հասնում 1908 թ. հոկտեմբերին։

Առաջին ներկայացումը լինում է «Պատվի համարը»։

Ինչպես դրաման, նույնպես և բեմադրությունն ու խաղը արտակարգ ուժեղ տպավորություն են գործում։ Պոլսահայ մտավորականությունը գերասանական այդպիսի կատարյալ մի խումբ չէր տեսել երբեք։ Հիացում է պատճառում ոչ միայն գլխավոր դերակատարը, մեծատաղանդ Հովհաննես Արել-

լանը, այլև ամբողջ խումբը. դա մի ներդաշնակ, միատարր անսամբլ էր, որ ինքնին սենսացիոն մի բան էր այն ժամանակ: Այդ ներկայացման մասին ընդարձակ մի հոգված է գրում մեծանուն նովելիստ Գրիգոր Զոհրապը, որտեղ, ի միջի այլոց, ասում է.

«... Կովկասահայ այս դրամատիկ խումբը հայտնություն մը եղավ ամենուս համար. ապշեցուցիչ, հիացուցիչ հայտնություն մը:

Եվ ինչքան մեծ եղավ մեր զարմանքը, երբ Աբելյան-Արմենյան խումբը Շիրվանզադեի այս հոյակապ գործը նույնքան հոյակապ արվեստագիտական տաղանդով հանդես բերավ: Աբելյանը Անդրեաս Էլիզբարովի ճնշից դերին մեջ, անստովյուս կատարելություն ցույց տվավ, որ ըմբռնած է Շիրվանզադեի գծած վաճառականի տիպի բոլոր գծերը. ամենեն նուրբերեն սկսած մինչև ամենեն թանձրերը, անոր հոգեկան ազդակները, առուտուրի մարդու բարոյականը, խորամանկությունները, այնքան հարազատ, խտացրած ու ճշգրիտ կերպով պատկերացրած, ի հայտ բերին աննման արվեստագիտ մը: Առանց վերապահության կրնամ հայտարարել, որ Աբելյան-Արմենյան դրամատիկ

խումբը հայոց գեղարվեստական փառքն է:  
Ցավեցա միայն, որ ոռւսահայերը թատերա-  
կան ասպարեզին վրա ալ գերազանցությու-  
նը խլեցին մեր ձեռքեն — անիրավնե՞րը...»:

Եթե այս ներկայացման ժամանակ դահլի-  
ճը կիսով շափ էր միայն լիքը լինում (Արել-  
յանը դիտմամբ էր խուսափել աղմկոտ ռեկ-  
լամներից), ապա երկրորդ և հաջորդ ներկա-  
յացումներին ցանկացողների թիվն այնքան  
մեծ է լինում, որ շատերը ետ են դառնում  
տոմս շճարելու պատճառով: Այսպես, լիքը  
դահլիճներով են անցնում հետագա բոլոր  
ներկայացումները թե քաղաքի կենտրոնում  
և թե նրա արվարձաններում:

Պոլսահայ մտավորականությունը ոչ մի-  
այն «հայտնագործում» է մի առաջնակարգ  
դրամատիկական խումբ, այլև ծանոթանում  
այնպիսի արտիստական ուժերի, ինչպիսիք  
էին Հովհաննես Արելյանը, Եկատերինա  
Դուրյան-Արմենյանը, Արմեն Արմենյանը:

Ամբողջ Կովկասում Արելյանն արդեն ճա-  
նաշված էր իբրև հայ բեմի ամենախոշոր  
ներկայացուցիչը Սիրանուշից հետո: Ար-  
տիստի խաղի գործած տպավորությունն  
առանձնապես ուժեղ էր Պոլսում այն պատ-

ճառով, որ նա գտնվում էր իր ուժերի ծաղկման շրջանում և միաժամանակ հանդես էր գալիս լավագույն դերերում՝ էլիպսարով, Կարլ Մոռը, դոկտոր Շտոկման... Հակառակ արվեստի մեջ այդ տարիներին տիրող անկումային տրամադրությունների, նրա խաղը ունեալիստական արվեստի մի կատարելություն էր։ Աղամյանից հետո թափուր մնացած աթոռը (տղամարդկանց գծով) գրավված պետք էր համարել։

Ե'վ Պոլսում, և՛ Կովկասում փսկապես որ նոր անուն էր Պուրյան-Արմենյանը։ Շնորհալի արտիստուէին, շնայած իր երիտասարդ հասակին, հմուտ ղեկավարի օգնությամբ կարճ ժամանակում այնքան վարպետություն էր ձեռք բերել, որ կարողանում էր հանդես դալ ամենապատասխանատու դերերում, ըստ որում փայլուն հաջողությամբ։ Նրա կերտած կանացի կերպարներից Մարգարիտը, Դեզիմոնան, Ամալյան, Եվգինեն աշքի էին ընկնում հոգեկան հարստությամբ, չերմությամբ, մարդկային նկարագրի լավագույն բարեմասնությունների զրույրմամբ։ Ահա թե ինչ է գրում Եվգինեի դերակատարման մասին թատերական քննադատներից մեկը. «...Տիկին

Դուրյան-Արմենյան ինքինքը գերազանցեց  
Եվգինեի ջախչախիլ դերին մեջ, որ մեզ  
վերջնականապես համոզեց, որ բեմական  
բացառիկ խառնվածքի մը, անսովոր տաղան-  
դի մը առջև կտնվինք: Իր խաղը, պարզ,  
խորունկ ու ներուժ, երբեք հուսախար շըլիներ  
մեղ արվեստակյալի կասկածովը»:

Որպես արտիստ, իր տաղանդի բուռն  
զարգացման շրջանում էր գտնվում և Արմեն  
Արմենյանը: Բհմական գործունեությունը  
սկսելով փոքր-ինչ անվստահ, առանց լուրջ  
նախապատրաստման, նա, շատերի համար  
անսպասելի, ընդհատել էր պրակտիկ գործու-  
նեությունը համարյա մեկ տասնամյակով,  
որպիսզի զինվի արվեստի տեսությամբ,—  
և ահա այժմ մեկը մյուսի ետևից ստեղծում  
էր իր լավագույն ներկայացումները, կեր-  
տում իր առաջնակարգ դերերը: Ընդամենը  
մեկ տարի առաջ Եղիպտոսում նա հանդես էր  
եկել Ֆրանցի գերակատարմամբ, այժմ առա-  
ջին անգամ պոլսահայ հասարակության հա-  
մար նա ցուցադրում էր իր Յագոն, որ պետք  
է դառնար նրա մնացուն դերերից մեկը՝ հաս-  
տատուն տեղ բռնելով հայ թատրոնի պատ-  
մության մեջ:

Ճիշտ է նկատում իր հուշերում արտիստը, որ եթե Ֆրանցի կերպարի իր մեկնաբանությունը տված լիներ, Յագոյի դերակատարման այդքան շուտ չէր ձեռնարկի: Այդ երկու կերպարների մեջ նմանություններ շատ կան, բայց կան և էական տարբերություններ:

Ինչպե՞ս է պատկերացնում նա այդ:

«Ֆրանցը տառապում է, Յագոն՝ հրճվում, Ֆրանցը կասկածում է իր ընդունակությունների վրա, Յագոն լիովին վստահ է: Ֆրանցը փիլիսոփայում է, իր խղճի հետ հաշվի նըստում, Յագոն կատակներով ու երգով իր ուռկանն է հյուսում: Ֆրանցը վախկոտ է, Յագոն՝ հանդուժն, Ֆրանցը ընդվզում է աստծու դոյլության դեմ, Յագոն՝ հրճվանքը «դժխային աստվածության» փառաբանությունն է անում... Ֆրանցը ծանրաբայլ ու գանդաղաշարժ մի մարդ է, Յագոն՝ արագաշարժ, ճկուն ու խորամանկ: Վերջապես Ֆրանցն արտաքնապես նույնպես հակալրելի է, Յագոն՝ վերին աստիճանի համակրելի»:

Թատերական քննադատներից մեկն այն կարծիքն է հայտնում, որ Արմեն Արմենյանի մեկնաբանությամբ Յագոյի դիվային շարության պատճառը վրեժինդրության



Ե. Գուրյան - Առմենիան



Զբանց՝ «Ավագակներ»

զգացումն է. նա լսել է, որ Օթելլոն իր ամուսնական առաջաստի «կցորդն» է և զել մի ժամանակ և ահա ուզում է վրիժառու լինել: Արտիստը չի համաձայնում այս բացատրության հետ. վրիժառության մոմենտը, իրոք, շատ աննշան տեղ է գրավում նրա խաղարկության մեջ: Յագոյի վրեժինդրության զգացումն ունի բոլորովին՝ այլ, հիմնական դրդապատճառներ,— ասում է նա:— Դա փառասիրությունն է, տիրելու ձգտումը, իր արժանիքի գիտակցությունը, արժանապատվությանը հասցրած խորը վիրավորանքը Մավրիկողմից: Եվ ահա նա, Յագոն, իր ողջ հնարագիտությունը զործագրում է, որպեսզի հագուրդ ու գոհացում տա իր վրեժին, իր փառատենչ ձգտումներին:

Արտիստն այստեղ ևս մերժում է ընդհանրապես շարություն խաղալու տրադիցիոն եղանակը և փորձում է ամեն նոր սիտուացիայում պատճառաբանել Յագոյի դաժանությունը: Ի դեպ, պետք է ասել, որ Շեքսպիրի մոտ այդ շարությունը խտացված է, շափազանցված, բայց ոչ այն աստիճան, որքան թվում է առաջին հայցքից: Դա Միլտոնի Սատանան չէ, ոչ էլ

Գյոթեի Մեֆիստոֆելը։ Յագոն ոտքից մինչև  
զլուխ վերածնության դարաշրջանի իտալացի  
է, արյունաբռու, դաժան, բիրտ, ծայրահեղո-  
թեն էգոիստ, ոչ մի սբրություն շճանաշող։  
Միջնադարից մնացած բարքերի աղտալից  
կոպտությունը և տեսական գաղանությունը,  
որը մեծ ուժով պատկերված է նաև Ռաբլեի  
մոտ, իր կնիքն է դրել Յագոյի նման մարդ-  
կանց վրա, որոնք կատաղի ու հուժկու գա-  
ղանների պես այլ բանի մասին շեն մտա-  
ծում, քան ուտելու, խմելու և կռվելու։ Նորից  
ինք կրկնում, այս չի նշանակում բնավ, թէ  
Յագոն շափազանցված չէ։ «Ճշմարիտ ար-  
վեստն իրավունք ունի շափազանցնելու», —  
գրել է Գորկին։ Դոն-Կիխոտները, Համլետնե-  
րը, Յասուստները լոկ ֆանտազիայի ծնունդ  
շեն, այլ իրական փաստերի միանգամայն  
օրինաշափ և անհրաժեշտ բանաստեղծական  
շափազանցում։

Եվ ահա, որովհետեւ Արմենյանը մերժում է  
շարության դեւ խաղալ և ներկայացնում է  
կենդանի մարդու, — նրա Յագոն դառնում է  
համոզիչ, ոեալիստական։ «Յագոն աննման  
կերպով անձնավորեց պ. Արմենյանը, —

զրում է մի քննադատ,— անոր ձայնին շփոթելուջը, տատամսոտ երկարաձիգ շեշտը, դիմախաղը, աշքերուն սենոականությունն ու հաճախակի շարժունությունն իր դիմ առաջ բերին սրահի բուռն ատելությունը, որ անշուշտ պատիվ մըն է արվեստագետին համար»։ Արմենյանի շարժումները Յագոյի դրում այնքան պարզ ու բնական էին, որ կարծես իր սարքած դավերի մեջ ինքը ոչ մի դեր չունի, և որ բոլորն ասես տեղին էին ու անխուսափելի, որ ինքը ոչ մի անազնիվ գործ չի կատարում։ Ընդհանուր առմամբ նրա Յագոն շատ ինքնուրույն գծեր և հետաքրքրական մանրամասներ ուներ։ Փայլուն գիկցիան և իմաստային շեշտերի անսահման հարցստությունը խաղին տալիս էին գեղարվեստական կատարելություն։

## 12

Արելյան-Արմենյան խմբի երկրորդ շրջագայությունը կատարվում է նախ դեպի Թիֆլիս, ապա դարձյալ Պոլիս։ Ներկայացումները տեղի են ունենում անփոփոխ հաջողությամբ, սակայն ոչ այնքան բարենպատճեամբ,

պայմաններում՝ նյութական տեսակետից: Հրդեհներից ապահովելու համար կատարում էին թատերական շենքերի նորոգություններ, որոնք և կանգնեցնում են ներկայացումները: Խումբն անցնում է Զմյուռնիա, որտեղ ներկայացումներ է տալիս Միրանուչի մասնակցությամբ:

Այս թատերախմբի երրորդ գաստրոլային տուրնեն սկսվում է 1911 թվականի մարտին: Այս անգամ Աբելյանն ու Արմենյանն իրենց առջև առավել լուրջ խնդիր են դնում. Բաքվի վրայով անցնել Հյուսիսային Կովկաս, ապա և Մոսկվա: Այս նկատառումով էլ խումբը վերակազմվում է, ուժեղացվում: Անդամներն էին՝ Գր. Ավետյան, Միրզոյան, Ղազարյան, Զարել, Անահիտ, Օ. Գովազյան, Ժամանեան և ուրիշներ: Ռեպերտուրն էր. «Պատվի համար», «Արմենուհի», «Սոկրատ» (Ս. Թառայանի), «Փառանձեմ» (Մ. Գևորգյանի), «Օթելո», «Հանրի Նավարացի», «Սատանան», «Յորուֆրու», «Հիմարը», «Դոկտոր Շտոկման», «Տրիլը» և «Ապահարզանի սյուրպիդները»:

Բաքվում խումբը տալիս է իր բոլոր ներկայացումները, որոնք ընդհանուր առմամբ

շերմությամբ են ընդունվում: Թերթերն  
առաջին հերթին արձանագրում են խմբի հա-  
մերաշխ, կազմակերպված, մի որոշակի մը-  
տահղացման ենթարկված խաղը: Դա նորու-  
թյուն էր հայ թատրոնի պատմության մեջ:

«Դատելով Արելյան-Արմենյան խմբի բե-  
մագրություններից, — զրում է «Բաքու» թիր-  
թը, — հեշտ է համոզվել, թի ինչպիսի նվա-  
ճումներ է արել վերջին տարիներին հայկա-  
կան դրաման: Առաջներում լավ՝ անսամբլի  
բացակայությունը հայ բեմի անբաժան հատ-  
կանիշն էր: Սակայն, ինչպես երևում է,  
Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի ազ-  
գեցությունը վերջերս անդրադարձել է նաև  
հայ թատրոնի վրա: Խեժիսուրան, որ գրեթե  
վտարված էր հայերի մոտ, այժմ պիեսների  
բեմագրության մեջ գրավել է իր հատուկ  
աեղը»:

Բաքվից հետո խումբն անցնում է Նոր-  
նախիչեան, որտեղ ժողովուրդը գրկաբաց է  
ընդունում նրանց:

Այստեղ կարելի էր մնալ և նորանոր պիես-  
ներ բեմագրել: Սակայն Արելյանն անհամբեր  
էր, նա շտապում էր Մոսկվա, շտապում էր  
վերջապես իրադործելու իր վաղեմի իղձը՝

Հանդես գալու Մոսկվայի խստապահանց հասարակության առաջ: Մակայն խոմքն այնուշանդերձ Մոսկվա է հասնում այն ժամանակ, երբ թատրոնների մեծ մասն արդեն փակված էր: Նրանք պետք է քաղաքում մնային մեկ ու կես օր, իսկ միակ ներկայացումը պետք է տեղի ունենար էրմիտաժ ամառային թատրոնում...

Այդ եզակի ներկայացման համար իրավացիորեն ընտրվում է Շիրվանզադեի «Պատվի համարը»:

Մոսկվայի մամուլից քաղված հետևյալ փոքրիկ հատվածները պատկերացում են աւլիս այդ ներկայացման մասին:

«Հայկական գաղութը երեկ հավաքվել էր «Էրմիտաժի» փակ թատրոնը, — զրում է «Ռուսսկոե սլովո» թերթը, — որտեղ հայ դերասանները ներկայացրին Շիրվանզադեի «Պատվի համարը»: Ներկայացումն անցավ գեղարվեստական մեծ հաջողությամբ: Յուրաքանչյուր արարվածից հետո ամբողջ դահլիճը ոգևորությամբ բեմ էր կանչում գրեթե բոլոր գերակատարներին: Առանձին հաջողություն ունիցան առ Պուրյան-Արմենյանը և

պ.պ. Արելյանն ու Արմենյանը: Թատրոնը գրեթե ծայրեծայր լիքն էր»: «Երեկվա հայկան ներկայացումը,— գրում է «Մաննեն ուստրո» թերթը, — գերազանցեց բոլոր սպասումները և անցավ մեծ հաջողությամբ: Ներկա էր ամբողջ հայկական գաղութը, որը խանդավառությամբ ընդունեց գերակատարներին և աղմկալից օվացիա արեց: Ի նկատի ունենալով այդպիսի ահագին հաջողությունը, ցանկալի կլիներ, որ խումբը մի երկու ներկայացում ևս տար»:

Սուանձնապես խոսե՞լ Արմենյանի կերտած Սուրենի բեմական կերպարի մասին... Կյանքից առնված և մեծ գրամատուրգի գրչի տակ ընդհանրացված այդ տիպը արտիստի պատկերմամբ դատարկապորտ, երես առած, շարաձձի, լպիրշ ու զգայնասեր լինելով հանգերծ՝ ձեռք էր բերել նաև իր և իր հարազատների մոտ կեղծիք, խարեռություն, ստորություն, շահամոլություն տեսնելու այնպիսի խորաթափանցություն, որ դրանով իսկ բարձրանում էր պիեսի այն պերսոնաժերի բարքը, որոնք ապրում էին ներքին խոր, անլուծելի մի դրամա:

Արմեն Արմենյանի բնմական գործունեության աշքի ընկնող գծերից՝ մեկը՝ կապն է ժողովրդական լայն խավերի հետ, նրա անդուլ ձգուումը՝ ծառայելու աշխատավոր ժողովրդին, թատերական արվեստի միջոցով մասնակից դարձնել նրան հասարակական առաջավոր գաղափարներին, սեր առաջացնել նրա մեջ դեպի բարին ու գեղեցիկը, ազատափրությունն ու հայրենասիրությունը։ Ռեակցիայի ծանր տարիներին, երբ հայ բեմի անխոնչ մշակները չեին դադարում ընդհանույնուալքության, քաղաքական ու բարոյական անկումի դեմ պայքար մղել և նյութական հնարավորություններ չունենալու պատճառով անկարող աշքի ընկնող արտիստների մի ուժեղ խումբ կազմակերպելու թիֆլիսում ամբողջ սեղոնի համար, փոքր խմբերով, միշտ հույսները դնելով սիրողների օգնության և աջակցության վրա, շրջում էին Կովկասի տարբեր քաղաքներն ու գյուղերը, — այդ տարիներին մանավանդ Արմենյանը բացառիկ ակտիվ մի գործունեություն է ծավալում։ Նա ձեռնամուխ է լինում Հավլաբարի

ժողովրդական թատրոնի աշխատանքների  
աշխուժացմանը, մի թատրոն, որը կոչված էր  
ծառայելու Թիֆլիսի այդ քաղաքամասի աշ-  
խատավորական խավերի կուլտուրական  
գարգացմանը, բայց այդ տարիներին քայ-  
քայվել էր, դարձել հարբեցողության ու դե-  
բուշի որչ:

1911 թվականի ամռանը, մերժելով Թիֆ-  
լիսի Դրամատիկ ընկերության վարչության  
հրավերը՝ աշխատելու առաջիկա սեղոնին  
թե՛ որպես ոեժիսոր և թե՛ որպես դերասան,  
նա ընդունում է ժողովրդական տան թատե-  
րական սեկցիայի գեղարվեստական մասի  
ուկավարությունը։ Իր շուրջը հավաքելով  
փոքրաթիվ, մեծ մասամբ անփորձ ուժերի  
(բացառություն էր կազմում Ամո Խարազյա-  
նը), Արմենյանն անցնում է գործի։ Յագել  
միայն կարելի է, որ այդ առողջ նախաձեռ-  
նությունն առանձին հաջողությամբ չի պը-  
սակիվում։

Եվ սակայն Արմենյանը տեղի չի տալիս։  
Որոշ ժամանակից հետո նա բեմադրում է  
մի պիես, որին բախտ էր վիճակվելու գառ-  
նալ նախահոկտեմբերյան շրջանի հայ պրո-

լետարական գրականության անդրանիկ գործը դրամատուրգիայի բնագավառում:

1912 թվականի գարնան վերջերին Դրամատիկ ընկերության ընդհանուր ժողովը, սեղոնի հաշվետվությունը լսելուց հետո, ընտրում է նաև մրցանակաբաշխության նոր ժյուրի: Ժյուրիի նախագահ է ընտրվում Արմեն Արմենյանը, փոխնախագահ՝ Միքայել Մանվելյանը:

Արմենյանն ընտրում է մրցանակաբաշխությանը ներկայացրած ինքնուրուցն պիեսներից երեքը, այդ թվում մի գրամա, որի խորագիրն էր «Գործադուլ»: «Այստեղ ինչ-որ մինչ այդ դեռևս լսված նոր խոսք էր ասվում, — հիշում է Արմենյանը, — բանվորական մասսա, իրական կյանք, կենդանի շարժում... Հեղինակի անունը ծածկագրով էր: Թիֆլիս հասա թե չէ, բաց արի երկրորդ ծրարը՝ Անուշավան Վարդանյան, հասցեն՝ Աղելիսանովի կաշվի գործարան»...

Ոգեսրված այդ՝ թեև անփորձ գրչով գրված, թեև սխալաշատ, բայց ամբողջովին իրական կյանքով շնչող գործով, — Արմենյանն իր մոտ է հրավիրում Հեղինակին, ծանոթանում հետք:

Իհարկե, թատրոնական վարչությունը շի  
համաձայնում պիեսը մտցնել ոեպերտուարի  
մեջ: Զնայած դրան, նա հեղինակի հետ սկը-  
սում է վերամշակել սեզոնից հետո, հրավի-  
րելով ազատ դերասաններին, ինչպես և սի-  
րողներին՝ գործող անձանց համար և նույն  
այդ ծխախոտի գործարանի բանվորներին՝  
մասսայական տեսարանների համար...

Փորձերը տեղի են ունենում Արտիստական  
թատրոնում, որի բեմը լայն հնարավորու-  
թյուններ էր ընձեռում մասսայական՝ տեսա-  
րանների համար: Օգտվելով այդ հանգա-  
մանքից, ոեժիսորն օգտագործում է ամբողջ  
բեմահարթակը և ձևավորում այնպես, որ  
լայն կամարներով բաժանված սրահները  
տալիս են խոշոր գործարանի, ըստ որում  
հենց Աղելիսանովի ծխախոտի գործարանի  
կատարյալ պատրանքը, մանավանդ որ աշ-  
խատող բանվորների «գերերը» կատարում  
էին նույն գործարանի բանվորները, որոնք  
այս անգամ գործադուլ էին անելու «անսո-  
վոր» պայմաններում՝ դահլիճում խոնված հա-  
սարակության ներկայությամբ:

Գրաքննությունից թույլտվություն ստանալու դիտավորությամբ պիեսի վերնագիրը փոխում էն և դնում «Տգիտության զոհեր»... Ոչինչ, միայն թե շարդելին, միայն թե բեմադրվի:

Եվ բեմադրվում է 1912 թվականին:

«Պիեսն ունեցավ... պարզ երկնքի տակ պայթող որոտի ազդեցություն,— վերջիշում է Արմենյանը,— օվացիա՝ գալցորկայից ու բալկոններից: Իսկ ի՞նչ էին մտածում օթյակներն ու պարտերը, այդ իրենց գործն է...»

Զարմանալի չէ, որ պաշտոնական ու կիսապաշտոնական թերթերը հարձակվում են և հեղինակի, և բեմադրողի վրա, աշխատելով, առնվազն, թուլացնել ներկայացման տպավորությունը: Դրական ուսցենզիայով հանդես եկավ «Ընկեր» շաբաթաթերթը, որն, ի միջի այլոց, գրում էր. «Մի բողեք մենք մոռացանք, որ թատրոնում ենք, այլ մի իրական ծիսախոտի դործարանում և մեր առջև տեսնում ենք մեր տառապյալ եղբայրներին, որոնք սկսել են զարթնել, սկսել են ըմբռնել իրենց մարդկային իրավունքը»:

Փորձեց բողոքել և խարված գրաքննիչը:

Բայց ամեն ինչ ուշ էր արդեն. «Գործազուր»  
գրաման իր բեմադրության հետ այնուհետև  
պատկանում էր պատմությանը:

## 14

Բոլորովին սխալ է այն պատկերացումը,  
թե իրր ուսանելով ֆրանսիական թատրոնի  
ականավոր ներկայացուցիչների մոտ, Ար-  
մենյանն անուշագիր էր գտնվել ազգային  
գրամատուրգիայի, նրա զարգացման նկատ-  
մամբ, այն բանի ցուցադրմամբ, ինչ կոշ-  
վում է ազգային կոլորիտ։ Ճիշտ հակառա-  
կը, նրա բեմադրած 111 պիեսներից 34-ը  
եղել են ինքնուրույն գրամատուրգիայի գոր-  
ծեր, որոնցից շուրջ երկու տասնյակը դիտ-  
վել են որպես իր ժամանակի լավագույն բե-  
մադրություններ։ Ճիշտակենք Վրթ. Փա-  
փառյանի «Ժայռը», Շիրվանղաղեի «Պատվի-  
համարը», «Եվգինին», «Չար ոգին», «Արմե-  
նուհին», «Կործանվածը», Դեմիրճյանի «Վա-  
սակը», և Քալանթարի «Մանր երազը» և  
այլն. Արմենյանը ու միայն հետեւղականո-  
րեն տանում էր ազգային գրամատուրգիայի  
զարգացման գիծ, այլև տանում էր դա դե-  
մոկրատիզմի դրոշի տակ։

իր լավագույն բեմադրություններով Արմեն  
Արմենյանը զգալիորեն առաջ էր մղում ոհ-  
միսորական արվեստի գործը հայ իրականու-  
թյան մեջ, ավելի ևս ամբապնդում էր ան-  
սամբլի զաղափարը, որ միշտ էլ զբաղեցրել  
է մեր թատերական գործիչներին։ Եվ այդ  
այն ժամանակ, երբ ներկայացումներն իրա-  
կանացվում էին ամեն տեսակետից բացար-  
ձակ աննպաստ պայմաններում. փորձերը  
կատարվում էին հապշտապ, բացակայում էր  
նկարչի ու երաժշտի աշխատանքը, զրկված  
էին տեխնիկական հարմարություններից և  
այլն։ «Անցյալում հայ դերասանը զորկ է  
եղել ամենատարրական, ամենահամեստ ու  
կենսական պայմաններից,— գրում է իր  
«Հուշեր»-ում Օլգա Գուլազյանը։ — Զորկ լի-  
նելով սեփական թատրոնական շենքից, հին  
դերասանը միայն ներկայացման օրը հնա-  
րավորություն ուներ դեկորներով փորձելու  
բեմի վրա։ Հաճախ դերասանը ներկայացման  
գիշերը առաջին անգամ էր տեսնում այն  
դոները, որից ելումուտ պիտի աներ, այն  
կահ-կարասին, որի վրա պիտի նստեր-  
ելներ, կամ այն ռեկվիզիտը, որի վրա ըստ  
դերի խաղ պիտի աներ։ Մենք հաճախ փոր-

ձարանում աթոռ շունեինք նստելու և եթե  
ըստ պիեսի բեմը պիտի ներկայացներ մի  
շքեղ հյուրասենյակ, իր փափուկ բազկաթոռ-  
ներով ու արդուզարդով, մենք այդ շքեղու-  
թյունը փորձի ժամանակ տեսնում էինք  
յուրաքանչյուրն իր տեսակի երեակայու-  
թյամբ, և այդ պատճառով էլ ներկայացման  
երեկոյան հանկարծակիի էինք գալիս ու մո-  
լորվում շփորձված ու շվարժված բեմահար-  
դարությունից»:

Հավ դեկորացիան փրկություն է սիրողնե-  
րի համար. իսկական արտիստների համար  
սակայն դրա պակասը կարող է և խթան  
հանդիսանալ՝ դրսեորելու իրենց ներքին ոչչ  
կարողությունը, ճշմարտապես ապրելու բե-  
մի վրա՝ մոռացնել տալ բեմը, բեմական  
միջավայրը:

Բայց Արմենյանի, որպես ռեժիսորի, ամե-  
նամեծ վաստակն, իհարկե, դերասանների  
հետ կատարած աշխատանքի մեջ էր. Ինչպես  
հայտնի է, ռեժիսորը շատ բան կարող է  
անել, բայց ոչ ամեն բան. Գլխավորը՝ դերա-  
սանի ձեռքին է, որին պետք է օգնել, ուղղու-  
թյուն տալ առաջին հերթին. Եվ Արմենյանը,  
մինչև վերջ հավատարիմ ռեալիստական

թատրոնի այդ սկզբունքներին, իր ամբողջ  
ուշադրությունը կենտրոնացնում էր դերասա-  
նի վրա: Բայց համեմատաբար հեշտ՝ է ռե-  
ժիսորի համար օգնել երիտասարդ դերա-  
սաններին և մղել նրանց ստեղծագործական  
ուղիղ ճանապարհի վրա, երբ նրա ձեռքի  
տակ կան ամեն տիսակ արտաքին ռեժիսո-  
րական հնարավորություններ, այնպիսի բե-  
մադրական միջոցներ, ինչպիսիք են գեկո-  
րացիաները, լուսավորությունը, աղմկահար  
միջոցները, երաժշտությունը, որոնց օգնու-  
թյամբ ստեղծվում է արտաքին տրամադրու-  
թյուն: Իսկ եթե այդ բոլորը չկա՞ն: Այդ գեպ-  
քում մնում է ներգործել դերասանների  
ներքնաշխարհի վրա, հրավիրել նրանց ապ-  
րելու պիեսի կյանքով:

Եվ այնուհանդերձ, չնայած այս արգելա-  
ռիթ հանգամանքներին, մեր բեմի ականա-  
վոր վարպետների թվում այսօր քիչ շեն այն-  
պիսիները, որոնք իրենց արտիստական մը-  
կըրտությունն ստացել են Սրմենյանից,  
իրենց առաջին քայլերն արել են նրա անմի-  
ջական ղեկավարությամբ: Հիշատակենք,  
օրինակ, և. Երեմյանին, Գ. Զանիրեկյանին,  
Ա. Հովհաննիսյանին, Ա. Փաշայանին, Գ.



Շահումյան «Ալեքսանդրիկի վաճառականը»



Գևոսկան՝ «Լեզինը 1918 թվականին»

---

Հարությունյանին, Ժ. Էլոյանին, Բ. Գաբրիելյանին, Էլ Հենք Խոսում Դուրյան-Արմենյանի մասին:

Այս տեսակետից շի կարելի չհիշատակել ժան Էլոյանի հետ կատարած նրա աշխատանքը՝ 1939—40 թատերաշրջաններում այն ժամանակ երիտասարդ գերասան ժան Էլոյանը միտք է հղանում պատրաստել Կարլ Մոռի դերը և առաջարկում է թատրոնի դիրեկտիային՝ ուսպերտուարի մեջ մտցնել «Ավաղակները», համոզված, իհարկե, որ Ֆրանցի դերն էլ կատարելու է Արմենյանը։ Վերջինս, սակայն, խորհուրդ է տալիս վերցնել ոչ թե կարի, այլ Ֆրանցի դերը, խոստանալով միաժամանակ օգնել նրան։ Եվ իսկապես, շաբաթներ շարունակ նա մեծադույն սիրով ու համբերությամբ պարապում է նրա հետ, օգնում է թափանցելու բեմական այդ բարդ կերպարի մեջ։ Համարձակ փորձը պսակվում է հաջողությամբ։ Առաջին ներկայացումներին մեկ-երկու անդամ մասնակցելուց հետո Արմենյանն այդ դերը ընդմիշտ հանձնում է ժան Էլոյանին։ Էնինականի թատրոնն ունենում է երկրորդ ֆրանց Մոռի։

Եթե նախասովետական շրջանում թերապնահատվել է Արմենյանի աշխատանքը որպես ռեժիսորի, կամ, լավագույն դեպքում, ըստ արժանվույն չի գնահատվել, ապա դրա պատճառներից մեկն էլ այն է, որ լայն հասրակությունը չէր կարողանում տարբերել, առանձնացնել ռեժիսորի աշխատանքը դերասանի աշխատանքից։ Սակայն նույնիսկ այդ պայմաններում նրա ռեժիսորական աշխատանքը նկատվել է, գնահատվել։

Ահա, օրինակ, ինչ է գրում Նոր-Նախիջևանում տրված ներկայացումների առթիվ ռեցենզենտը. «... Ես հիշեցի Մոսկվայի Գեղարվեստական թատրոնը, որտեղ ամեն մի դերասան իր տեղն ունի բռնած և չկա մեկը, որի մասին կարելի լինի ասել, որ սա՝ փշացրեց իր գերը, սա՝ չկարողացավ հարկավոր տիպ ստեղծել։ Ամեն գերասան՝ իր տեղը, բոլորը մեկի համար, մեկը՝ բոլորի համար — սա է անսամբլ կազմում։ Դեկավարող ուժերը, ինչպես երեսում է, այդ բանը հասկացել են և այդպես էլ տանում են գործը։ Այն հոյակապ բավականությունը, որ մենք ստացանք հայկական այս խմբի ներկայացումներից՝ մեզ համար միանգամայն անսպասելի էր»։

Այսպիսով կարող ենք ասել, որ իբրև ռեժիսոր Արմենյանը մեծ վաստակ ունի հայ թատրոնի պատմության մեջ։ Նրա մի շաբաթամադրությունները նպաստում են, որպեսդի տասական թվականներից Մոսկվայի թատրոնների, մասնավորապես Գեղարվեստական թատրոնի տրադիցիաներով զաստիարակված նոր, թարմ ուժերը (առաջին հերթին, իհարկե, տաղանդավոր Օվի Սևումյանը) նոր աստիճանի բարձրացնեն ռեժիսորական արվեստը, ստեղծեն նոր որակ։

Շատ ուշագրավ գիտողություններ է անում նրա ռեժիսորական արվեստի մասին Վահրամ Փափազյանը։ Նա գտնում է, որ Արմենյանի մոտ մտահղացման պրոցեսը կատարվում էր շափազանց արագ և ծայր աստիճան զեղուն, թեև ինքը ֆիզիկապես դժվարանում էր ցուցադրել դա բհմի վրա։ Ահա թե ինչու անփորձ, սկսնակ դերասանները շատ բան չեին կարողանում վերցնեն նրանից, մինչդեռ փորձված արտիստների համար նրա մտահղացումներն անգնահատելի են։

«Մեր դերասաններից ոչ քևերը նրա ձեռքի տակ ճոխացան, ամրացան, — իր հուշերում

գրում է Փափազյանը: — Սիրանուցը նույնիսկ... օգտվեց, ճիշտ է, միշտ հակածառելով ու դիմադրելով, նրա մտահղացումներից, և երջանիկ եմ ես վկայել այդ, ի պատիվ Արմենյանի, որի գեղարվեստական արժեքը այսօր էլ մնաց անհասկանալի ու չդնահատված:

Ես, որ տեսել եմ արվեստի մեծագույն կորիֆեյներին, սովորել նրանցից ու նրանց հետ աշխատել, շեմ մոռանա գեղարվեստական անբավ հարստությունն ու հմտությունը, արտահայտության փայլուն վարպետությունը, որ քաղել եմ նրանից, Դոն-Ժուանի, Բեռնարդինի՝ իզրայելի և մի շարք այլ կերպարների շուրջ նրա հետ աշխատելիս: Արմենյանը սահմանափակ ուղեղների համար անհասկանալի էր և անտաղանդների համար՝ անօգտագործելի, և իմացիր, մտերիմ ընթերցող, որ ես հարգանքով կհամբուրեի ծերունազարդ վարպետի աջը, ի հեճուկս մի քանի թզուկների, որոնց սահմանափակ հոգին չէր կարող տեսնել և շտեսավ Արմենյանի մարդկային, շատ հասկանալի թերությունների հետև, նրա ստեղծագործողի անհատականությունը»:

Արմենյանի բնմական արվեստի մասին  
խոսելիս առաջին հերթին պետք է հիշել նրա  
հարուստ, արտահայտիլ դիմախաղը, նրա  
այլաստիկական շարժումները: Նրա արտա-  
րինն այնքան էր բնմական, որ ավելին չէր  
մնում ցանկանալու մի դերասանի համար,  
որին ներքին ստեղծագործական աշխատան-  
քը ճղում էր մարմնավորելու տարրեր, հո-  
գեպես ու ֆիզիկապես իրար ոչ մի նմանու-  
թյուն չունեցող կերպարներ: Արմենյանը հայ  
բեմի ամենակովտուրական արտիստներից  
մեկն է, այս բառի լայն առումով. տարրեր  
ժամանակաշրջանների կամ տարրեր ազգու-  
թյունների պատկանող կերպարների անձնա-  
գորումը ամենայն ոեալականությամբ՝ սկըս-  
ված հարդարվածքից ու քայլվածքից մինչև  
խոսքի ու ժեստի նյուանսավորումը՝ քշերին  
է այնքան տառապանք պատճառել, որ-  
քան Արմենյանին. նա իր մարմնին տիրա-  
պետում էր այնպես, ինչպես վիրտուոզ չու-  
թակահարն է իշխում իր գործիքին: Այժմ էլ  
նա երիտասարդ դերասաններից պահանջում  
է շափազանց ուշադիր գտնվել դեպի իրենց

միակ գործիքը, մշտապես ու անընդհատ Հսկել ֆիզիկական կոփվածքին, սևփական քայլվածքին, ձեռքի և գլխի շարժումներին, ձայնի ելեկչներին, դիկցիայի մաքրությանը, այն ամենին, ինչ դերասանին արտիստ է զարձնում նույնիսկ բեմից դուրս։ Որովհետեւ չի կարելի բեմում գեղեցիկ, կուլտուրական կամ վայելուշ երևալ, Աինելով այդպիսին կյանքում։

Այս հանգամանքը քիչ շի նպաստել Արմեն Արմենյանի արտիստական գործունեության հաջողությանը, բայց դա նրա արվեստի առանձնահատկություններից մեկն է միայն, ըստ որում՝ ոչ առաջնակարգը։ Որպես ճշմարիտ տաղանդավոր արտիստ, նա իր ուշադրությունը կենտրոնացնում է կերպարի ներքին էության բացահայտման վրա և այս դեպքում իր հարուստ արտաքինը միջոց է ծառայեցնում այդ խնդրի լուծման համար։

Մենք տեսանք, որ Արմենյանին զրավել են բեմական բարդ, հակասական կերպարները, հոգեկան խոռվք ապրող անձերը, մի բան, որ դերասանից պահանջում է ոչ միայն անհատականություն, բազմակողմանիություն, այլև մեծ թափ, հուժկու խառնվածք։ Այս տե-

սակետից արտիստն իրեն փայլուն կերպով  
դրսեռել է Յագոյի, Ֆրանցի, Շայլոկի, Բա-  
րոնի, Հարլագոնի դերերում. դրանք ուժեղ,  
կենդանի, բարդ կերպարներ են, որոնք կրում  
են արտիստի ինքնատիպ տաղանդի որոշա-  
կի կնիքը: Բոլորովին այլ է Արմենյանը  
կոմիկական կերպարներում. նրա Գու-  
վերնյորը, Սատանան, Սատանայի ճուտը շա-  
րաձճի են, թեթև, սրամիտ, ճկուն, դյուրա-  
թեք, զվարճալի, կատակաբան, ամբողջովին  
կյանք ու կրակ:

Այն հանգամանքը, որ Արմենյանը հավա-  
սար ուժով հանդես է եկել և դրամատիկ, և  
կոմիկական դերերում, մի որոշ շափով խան-  
դարել է ժամանակակիցներին անվերապա-  
հորեն որոշելու նրա ամալուան: Սակայն այդ  
փաստը նրա քանքարի ճոխության մասին է խո-  
չուզաշխարհի հարստության մասին է խո-  
սում միայն: Միթե Վաղարշ Վաղարշյանին  
շեն պատկանում ինչպես Խլեստակովի,  
նույնպես և Բովըշովի լավագույն դերակա-  
տարումները սովետահայ բեմում: Նույնը  
կարելի է ասել մեր բեմի (ոչ միայն մեր  
բեմի) շատ կորիֆեյների մասին: Դա հենց  
այն է, ինչ կոչվում է վարպետություն, որի

մեջ պարտադիր կերպով մտնում են ինչպես  
կատարելությունը, նույնպես և բազմակող-  
մանիությունը, վերափոխման ուժը:

Հանդիսատեսն Արմենյանին տեսել է բե-  
մում և՛ մեղմ ու քնքուշ, և՛ զվարթ ու շարաձճի,  
և՛ սահուն ու հաշվենկատ, զուսպ, խորա-  
մանկ, խարդախ, վրիժառու, «Հրեշտակից»  
մինչև «սատանա», բայց բոլոր դեպքերում  
չերմ, անկեղծ, ակտիվ, գործունյա, որոնող:  
Ունենալով բեմական նախանձելի տեխնիկա,  
նա երբեք չի շարաշահում դա և. միշտ իր  
ուշադրությունը կենտրոնացնում է կերպարի  
հոգեբանության բացահայտման, այն էսթե-  
տիկական ձևերի մեջ դրսեորելու վրա:

Չի կարելի չնշել բեմական խոսքի նկատ-  
մամբ նրա հանդես բերած բացառիկ պա-  
տասխանատվության մասին: Դիալոգի հըս-  
տակությունը, պարզությունն ու թեթևությու-  
նը Արմենյանի արվեստի հմայիչ կողմերից  
են: Ուսած լինելով բեմական խոսքի լավա-  
գույն վարպետների մոտ Ֆրանսիայում, նա  
նույն սկզբունքները կիրառել է իր պրակտի-  
կայում, նույնը պահանջել խաղընկերներից և  
երիտասարդ դերասաններից: Նրա շարժում-  
ները հարմարեցված են խոսքին և խոսքը՝

շարժումներին, Արմենյանը եղել է Հայ բհմարվեստի այն տաղանդավոր ներկայացուցիչներից, որոնք նախասովեստական շրջանում թափառելով երկրից երկիր և քաղաքից քաղաք, խաղալով ամենախայտարդիտ առևդիտորիաների առաջ, միշտ էլ բարձր են պահել Հայ լեզվի մաքրությունն ու գեղեցկությունը, նրա ուժն ու հմայքը:

## 16

Հայ թատրոնի մշտական անկայուն, Հեղհեղուկ վիճակը անվանի դերասաններին քշում էր տեղից տեղ, ստիպում գործունեության նոր վայրեր որոնել, նորից միանալ այս կամ այն խմբին, նորից մտահոգվել ոեպերտուարի մասին, Հովանավորություն որոնել այս կամ այն ազգեցիկ գործչի մոտ, սիրաշահել մամուլի ներկայացուցիչներին...

Այդպիսի մի ժամանակ ահա Արմենյանը սկզբունքային վեճի մեջ է մտնում Թիֆլիսի Պրամատիկական ընկերության վարչության հետ, ընդարձակ մի հոդվածում ցույց տալիս, որ Հայկական միջավայրում դերասանը զրկված է ոչ միայն նյութական, այլև բարոգական տարրական իրավունքներից, որ նայական տարրական

Հայ մեծատունների ծառած է, ստրուկը: «Դե-  
րասանը չի կարող բողոքել, դիմացն ուժեղ  
զինված մոնոպոլ կա: Նա պետք է համա-  
կերպվի ու ժպտա, սիրաշահի, թե չէ փողո-  
ցում կմնա, ուրիշ ճար չկա: Եվ նա ժպտում  
է — սրտի խորքում կրելով բուռն արհամար-  
հանք և ատելություն... Եվ այդ արհամար-  
հանքը զարգանալով, հետզհետե անգիտակ-  
ցորեն ներգործում է իր իսկ անձի վրա — իր  
խանդավառությունների, իր իդեալի՝ թատ-  
րոնի վրա: Դա վհատանքն է, կատարյալ ան-  
բարոյացումն»:

Այսպիսի տողեր պարունակող հոդվածից  
հետո ավելորդ էր նույնիսկ մտածել Թիֆլի-  
սում մնալու, Թիֆլիսի Դրամատիկական լն-  
կերության վարչության հետ գործ ունենալու  
մասին, և Սրմենյանն ու Դուրյան-Արմեն-  
յանը տեղափոխվում են Բաքու:

Սակայն բոլոր ջանքերը, Բաքվի թատերա-  
կան սեղոնք սկսել կազմ ու պատրաստ, լավ,  
բարձրորակ խմբով և լավ ռեպերտուարով, —  
ապարդյուն են անցնում: Սկսվում է առաջին  
համաշխարհային պատերազմը և ամեն ինչ  
հիմքից փոխվում, տակնոսվրա է լինում,

խորտակվում են բազում ծրագրեր ու երազանքներ:

Հետագա մի քանի տարին բեմական արվեստի համար ծանր, հոգսերով ու տառապահներով լի տարիներ եղան: Առաջավոր ուժերը ջանք էին թափում վերահաս այլասիրումից պահպանել հայ թատերական արվեստի լավագույն տրադիցիաները, պայքարել ազգային սահմանափակության դեմ, թատրոնը կեղծ հայրենասիրական մելոդրամաներով ողողելու դեմ:

Այս տարիներին Արմենյանին մեկ կարելի է տեսնել «Դրամա-Օպերետային խումբ» կազմակերպելիս ու դեկավարելիս, մեկ Ռոստովում, մեկ Երևանում կամ Ղարսում, վերջապես՝ Իրանում, որտեղ նա աշխատում է 1917-ից մինչև 1921 թվականը, թարմ շունչ մտցնելով իրանահայերի թատերական կյանքի մեջ,— մինչև որ 1921-ի հունիսին նա ոտք է դնում Սովետական հողը:

Սկսվում է նրա կյանքի նոր, ստեղծագործությամբ հարուստ, օրերով ու տարիներով երջանիկ շրջանը...

Իրանից Հասնելով Բաքու, Արմենյան ամուսիններն անմիջապես անցնում են գործի:

Առաջին ներկայացումը տեղի է ունենում 1921 թ. օգոստոսի 23-ին, իսկ ուղիղ մեկ ամիս հետո, Սովետական Հայաստանի ներկայացուցչության նախաձեռնությամբ, Հանդիսավոր ու զերմ իրադրության մեջ տռնվում է Արմեն Արմենյանի բեմական գործունեության 30-ամյակը: Երեկութիւն ներկա են լինում պարտիայի և կառավարության ղեկավար աշխատողներ, արդյունաբերական և կուլտուրական ձեռնարկությունների ու հիմնարկությունների ներկայացուցիչներ, ինչպես և հայ, ոռու, ադրբեջանական ու վրացական դրամատիկ խմբերի անդամներ:

Նույն ներկայացուցչության միջոցով Արմենյան ամուսինները հրավիրում են երկան:

Սակայն Թիֆլիսում, ծանոթանալով Հայկական թատրոնի վիճակին, նա փոխում է որոշումը, ստանձնում է այդ թատրոնի ու-

ժիսորությունը և աշխատում այդտեղ մինչեւ  
հաջորդ տարվա գարունը:

Այսուհետեւ մենք Արմենյանին տեսնում  
ենք Ալեքսանդրապոլում: Սկսվում է տեղում  
եղած թատերական ուժերին հավաքելու,  
թատրոնի համարյա ավերված շենքը կարգի  
բերելու և նորոգելու դժվարին գործը:

Այստեղ է, որ մի անգամ ևս բացահայտ-  
վում են Արմենյանի կազմակերպչական բազ-  
մակողմանի կարողությունները: Երկրի վե-  
րակառուցման այդ ժանր տարիներին, նա  
խանդավառությամբ ձեռնամուխ է լինում  
թատերական կյանքին նոր շունչ, նոր թափ  
հաղորդելուն, ներկայացումներ է կազմա-  
կերպում ոչ միայն քաղաքային թատրոնում,  
այլև ակումբներում՝ հատկապես բանվորու-  
թյան համար և «կազաշի պոստում» ու «Պո-  
լիգոնում»՝ աշակերտության համար:

Ահա որբերի հետ ունեցած ամենօրյա  
շփումների այդ շրջանում է, որ նրանց իսկ  
ցանկությամբ միտք է հղանում կազմակեր-  
պելու բացօթյա մի ներկայացում երեխաների  
համար՝ նրանց մասնակցությամբ: Բայց ի՞նչ  
պիես ընտրել, որ միաժամանակ և՛ մասսա-  
յական լինի, և՛ փոքրերի հոգեբանությանը

մոտ ու հարազատ։ Ի վերջո նա կանգ է առնում «Սասունցի Դավիթ» ինսցենիրովկայի վրա։ Սակայն լայն կտավի այսպիսի մի գործ, որ պահանջում էր մասսայական տեսարաններ, չէր կարելի ներկայացնել նույնիսկ որբանոցի հրապարակում։ Հարկավոր էր գտնել ամֆիթատրոնի նման վայր, ուր հնարավոր լիներ տեղավորել հարյուրից ավելի «դերասանների» և բազմաթիվ հանդիսականների։

Եվ այդ վայրը գտնվում է։ «Կազաչի պոստի» որբանոցի հարավ-արևելյան կողմի ձորն է լինում դա։

Այդ ուշագրավ ներկայացումը տեղի է ունենում 1922 թվականի հունիսի 8-ին, ապա կրկնվում նաև 31-ին։

Ներկայացմանը ներկա են լինում տեղական երեք որբանոցների սաներն ու ծառայողները, ինչպես նաև քաղաքի գպրոցների աշակերտությունն ու տեղական մարմինների աշխատակիցները, շուրջ 10 հազար հանդիսական։

Ահա թե ինչ է գրում այդ առթիվ «Շիրակի ուանչպար» թերթը։

«Շաբաթ, ամսի 8-ին, երեկոյան ժամը

Ե-ին, Կազմաշի պոստի որբանոցի երկսեռ  
աշակերտությունը, ղեկավարությամբ Արմեն-  
յանի, տվեց բացօթյա ներկայացում։ Մաս-  
նակցում էին մոտ 150 հոգի ձիավոր և հե-  
տիւտն։

...Տեսարանը վերին աստիճանի խայտա-  
բը դեռ պատկեր էր ներկայացնում։

...Տեղը՝ հուշարձանի աջ կողմի ձորը, շատ  
հարմար էր լնտրված, որի շնորհիվ բոլոր  
հանդիսականները ոչ միայն ազատորեն տես-  
նում էին ամբողջ պիեսը, այլև հստակ  
լսում էին գերակատարների յուրաքանչյուր  
խոսքը։ Այն տպավորությունն էր ստացվում,  
որ, կարծես, ներկա էին գտնվում հին հու-  
նական ամֆիթատրոնների ներկայացմանը։  
Զնայած որ խաղացողները աշակերտներ էին,  
ստացված տպավորությունը նույնքան գու-  
նագեղ էր և խաղը նույնքան կենդանի, որքան  
կանոնավոր գերասանական խմբի ներկայա-  
ցում։

...Հաջող էին մասնավորապես ըմբոստա-  
ցած սասունցիների քարերով հալածանքը  
Մսրա հարկահավաքների դեմ, առաջնորդու-  
թյամբ Դավթի, մսրեցի կանանց խմբական  
պարերն ու երգերը և ծաղրաբանությունները՝

շարդված հարկահավաքների վերադարձը դիմավորելիս։ Մսրա Մելիքի և Սասունցի Դավթի մենամարտի տեսարանը և, մանավանդ, սասունցիների և մսրեցիների կռվի տեսարանը։ Այդ օրը ի՞սկ որ ոեժիսորական աշխատանքի հիշատակելի օր կարելի է համարել։

Եվ իսկապես, իր տեսակի մեջ նմանը չունեցող այդ ներկայացումը նոր խոսք էր սովորակայ թատրոնի պատմության մեջ ոչ միայն ոեժիսորական մտահղացմամբ և վիթխարի մասշտաբներով, այլև, որ առավել կարևոր է, հայրենասիրական բարձր պաթոսով։ Դա մի ներկայացում էր, որ խաղացվում էր ներկայացնողների համար, որովհետեւ խաղին մասնակցում էին և նրանք, որոնք նստած էին բարձրությունների վրա. այդ տասը հազար դիտողները իրենց նույնքան էին մասնակից զգում դյուցազնական գոտեմարտին, որքան ամֆիթատրոնի կենտրոնում գտնվող հարյուրից ավելի պատանիներն ու աղջիկները. իսկ հայրենիքի թշնամիների դեմ տարած հաղթանակի առթիվ պութկած խանդավառությունը արձագանքը չէ՞ր արդյոք



Յազո՞ «Օրեն»



Հովհաններդ՝ «Ռուս մարդիկ»

այն ցնծության, որ ապրում էր հին աշխարհի դեմ հաղթանակած ժողովուրդը...

Մեծ է մղել այդ ներկայացման նշանակությունը նաև մատաղ սերնդի դաստիարակության տեսակետից: Պետք է միայն պատկերացնել, թե ինչ են ապրել այդ երկու ամիսների ընթացքում ներկայացման մեջ զբաղված երեխաները, ինչ են ապրել ներկայացման ժամանակ, երբ զգացել են հաղարավոր իրենց նմանների բոցավառ հայացքները, նրանց սրտաբուխ գոռում-գոշումները, ծիծաղն ու բացականշությունները...

## 18

Հաջորիդ երկու թատերաշրջաններում (1922-23 և 1923—24) համեմատաբար պվելի նպաստավոր պայմաններ են ստեղծվում թատրոնի համար. որոշ շափով բարելավվում են նյութական պայմանները, դերասանական խմբի կազմը հասցվում է քսան հոգու: Շարունակվում է բաց մնալ ռեպերտուարի հարցը: Նոր կյանքը պատկերող պիեսներ դեռևս չկացն և այս տեսակետից կենինականը բացառություն կազմել չէր կարող, իհարկե: Մնում էր կանգ առնել այնպիսի գործերի

վրա, որոնց մեջ ուժեղ էր քննադատական ոգին, որոնք ցուցադրում էին կապիտալիստական փրականության փտածությունն ու նեխումը, մարդու հոգեոր այլասերումը փողի թագավորության պայմաններում։

Յանկանալով թատրոնի կատարած աշխատանքը ցույց տալ նաև մայրաքաղաքում, խումբը 1924 թ. մայիսին մեկնում է Երևան և ներկայացումներ տալիս այնտեղ՝ բեմադրելով Նիկողեմիի «Անշափահասը», Օ. Էաքրի «Հավասարության կղզին», Մյուլերի «Բոցը», Գորդինի «Սատանան», Իբսենի «Ուրվականները», Հելգուսհատի «Ծլյուկ և Յառ» և Մոլիերի «Ազահը»։

## 19

Վերջացնելով իր գաստրոլային ներկայացումները Երևանում, Թաքվում, ապա և Անդրկասպյան երկրներում, Արմենյանը 1924 թ. հոկտեմբերին մեկնում է Մոսկվա։ Նրա նպատակն էր՝ դիտել մայրաքաղաքի առաջավոր թատրոնների, հատկապես Գեղարվեստական և Փոքր թատրոնների ներկայացումները, մոտիկից ծանոթանալ բեմարվեստի վերջին նորություններին, ծանոթանալ ուշ-

սական թատրոնի աշքի ընկնող գործիչների հետ։ Ամիսներ շարունակ նա հափշտակությամբ դիտում է շատ նեղկայացումներ, ներկա է լինում Փոքր թատրոնի փորձերին, մասնակցում այդ թատրոնի հարյուրամյակի առթիվ կազմակերպված տոնակատարությանը, անձամբ ծանոթանում է Նեմիրովիշ-Դանշենկոյի և Ստանիսլավսկու հետ, ապա նորից վերադառնում է ստեղծագործական աշխատանքի։

Արմեն Արմենյանը ռեսպուբլիկայի ժողովրդական այն արտիստներից է, որոնք այդ կոչմանն են արժանանում ավելի վաղ, քան կհրապարակվի կառավարական որոշումը, ընդ որում անուն և հոչակ են ձեռք բերում ոչ թե թերթերի միջոցով, այլ երկրի քաղաքներն ու գյուղերը շրջելով, արվեստագետի իրենց խոսքն ամենալայն մասսաներին հասցնելով։

1934 թվականին կուսժողկոմատը որոշում է Ալավերդում կազմակերպել «Բանվորական շրջանային թատրոն»՝ հատկապես պղնձարդյունաբերական շրջանի բանվորներին ու կոլտնտեսականներին սպասարկելու համար։ Արմենյանը սիրով հանձն է առնում այդ

թատրոնը կազմակերպելու գործը։ Նույն թվականի նոյեմբերի 5-ին նորաստեղծ թատրոնը սկսում է իր ներկայացումները Զաբարլիի «Յաշար» պիեսով, որը մի շաբաթ հետո բեմադրվում է և Լենհանքերի ակումբում։ Այնուհետև ներկայացումներ են տրվում Մանեսի, Ալավերդու, Շամլուղի արդյունաբերական շրջաններում, Սանահինի երկաթղծի ակումբում, Զորագիսում, շրջակա գյուղերում։

Հաջորդ թվականի օգոստոսին խումբը բաժանվում է երկու բրիգադի և սկսում ներկայացումների մի շարք՝ նվիրված աշնանացանի կամպանիային։ Ներկայացումներ են են տրվում Մանեսում, Ալավերդում, Շամլուղում և ապա՝ լեռնային գյուղերում, գյուղեր, որոնք իրենց օրում ոչ գերասան էին տեսել, ոչ ներկայացում։ Ինչ խոսք, որ կոլտնտեսականները ամենուրեք խանդավառությամբ են դիմավորում կուլտուրական ֆրոնտի անխոնջ այդ մշակներին, լցնում դահլիճներն ու ակումբները, իրենց անմիջական ոգևորությամբ ոգեշնչում դերասաններին։

1935 թվականի նոյեմբերի 29-ին, Հայաստանում սովետական կարգերի հաստատման 15-րդ տարեդարձի առթիվ հրապարակվում է

ԿԵՆՏՊՈՐՃԿՈՄԻ ոՐՈՉՈՒՅԾ, ի թիվս այլ ար-  
տիստների, նաև Արմեն Արմենյանին ոհս-  
պուբլիկացի ժողովրդական արտիստի պատ-  
վավոր կոչում շնորհելու մասին:

20

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ աշ-  
խատելիս Արմենյանը երիտասարդական ավ-  
յունով շարունակում է նորանոր դերեր խա-  
ղալ, ստեղծել բեմական կլասիկ կերպարներ,  
որոնց մեջ առանձնահատուկ տեղ են գրա-  
վում Բարոնը (Պուշկին՝ «Ժլատ ասպետ»),  
Հարպագոնը (Մոլիեր՝ «Ագահ») և Շայլո-  
կը (Շեքսպիր՝ «Վենետիկի վաճառական»),  
երեք նոր դերակատարումներ, որոնք կարող  
են դրվել նրա կերտած Յագոյի, Ֆրանցի,  
Ռանկի կողքին:

Արտիստը երկար ժամանակ է նվիրել այս  
կերպարների ստեղծագործությանը, նախ-  
քան բեմ դուրս գալը հիմնավորապես ուսում-  
նասիրել է ոչ միայն այդ երկերը, այլև  
նրանց հեղինակներին, թերթել է բազմաթիվ  
ուսումնասիրություններ և ինքն էլ, ի մի բե-  
րելով տարիների այդ աշխատանքի արդյուն-  
քը, գրել է մի ուսումնասիրություն՝ «Խաղա-

ցածս երեք ժլատի իմ մեկնաբանությունը» խորագրով, որի համառոտագրությունը զետեղել է «60 տարի հայ բեմի վրա» խորագիրը կրող հուշերում:

Բնութագրելով Շեքսպիրի ռեալիզմի առանձնահատկությունը, Պուշկինը գրել է. «Մոլիերի ժլատը՝ ժլատ է, Շեքսպիրի Շայլուկը՝ ժլատ է, ուշիմ, վրիժառու, որդիասեր ու սրամիտ»։ Եթե ցանկանանք մեկ խոսքով բնութագրել Արմենյանի կատարած ուսումնասիրությունը հիշյալ երեք ժլատների մասին, պետք է ասել, որ նա իրեն նպատակ է դնում ցույց տալու, թե ինչպես դրանցից ամեն մեկն իր հերթին ունի բնավորության շատ գծեր, կողմեր, որոնք, ասենք՝ Հարպակոնին տարբերում են Բարոնից, սրան՝ Շայլուկից։ Այլ կերպ ասած՝ արտիստը փորձում է գրական երկը մեկնաբանել բեմական արվեստի տեսակետից, ցույց տալ կերպարները շարժման մեջ, բացատրել ու հիմնավորել նրանց ամեն մի խոսքը դերասանական արտահայտչական միջոցներով, բեմական գործողությամբ, արարթով, որը և թատերական արվեստի հիմքերի հիմքն է։

Շնորհիվ նախնական այդպիսի խոր ու  
բազմակողմանի տևումնասիրության, Ար-  
մենյանին հաջողվում է տարբեր ժամանակ-  
ներում ստեղծել այդ երեք բնմական կեր-  
պարները, որոնք առաջին հայացքից նման  
լինելով ժլատությամբ, անհատականացված  
են ըստ էության, ունեն փրենց ուրուցն հա-  
յացքները, բնավորությունները, նախասի-  
րությունները, մարդկային այնպիսի թու-  
լությունները, որոնց շնորհիվ երբեմն ընկնում  
են կոմիկական վիճակների մեջ, այսինքն՝  
տարբեր էպոխաների, հանգամանքների,  
տարբեր ազգությունների ծնունդ են, տար-  
բեր հանձարների լույսով լուսավորված:

1940 թվականի հոկտեմբերին Հայաստա-  
նի թատերական ընկերության կողմից Ար-  
մեն Արմենյանը հրավեր է ստանում Երևա-  
նում հանդես գալու հաշվետու ստեղծագոր-  
ծական երեկոներով:

Հոկտեմբերի 20-ին Գ. Սոմնդուկյանի ան-  
վան թատրոնում նա մասնակցեց «Օթելոյի»  
ներկայացմանը՝ հանդես գալով Յագոյի դե-  
րում. Օթելոյի դերը կատարում էր ուսապուր-  
լիկայի ժողովրդական արտիստ Գուրգեն Զա-  
նիբեկյանը, որի հետ մինչ այդ մի շաբթ ան-

գամներ նա հանդես էր եկել Լենինականում  
և այլուր: Ներկայացումը մեծ հետաքրքրություն առաջացրեց մայրաքաղաքի թատերասեր հասարակայնության մեջ:

Հաջորդ օրը Գրողների տանը տեղի է ունենում հանդիպման երեկո: Հավաքույթը զերմխոսքով բաց է անում ժողովրդական արտիստուհի Սրուս Ռոկանյանը: Սրմենյանի բեմական գործունեության մասին զեկուցում է տալիս ժողովրդական արտիստ Գուրգեն Ջանիբեկյանը, որը հանդամանորեն կանգ է առնում նրա անցած ստեղծագործական հարուստ կյանքի վրա, խոսում է հայ թատրոնի պատմության մեջ կատարած նրա աշքի ընկնող դերի մասին:

Մեր դարի առաջին կեսի հայ թատրոնի վետերանների շարքին է պատկանում Արմեն Արմենյանը: Երկար տարիներ ուսած լինելով Ֆրանսիայում, կրելով իր վրա բեմական արվեստի այնպիսի խոշոր ներկայացուցիչների ազդեցությունը, ինչպիսիք են Սառա Բեռնարը, Մունե Սյուլին, Արմենյանը նրանց լավագույն տրադիցիաները կիրառում է բե-

մական պրակտիկայում: «Ես Ֆրանսիայից  
բերել էի ոչ միայն նրա կլասիկ արվեստի  
բարձրագույն ներկայացուցիչների՝ Մունե  
Սյովլիի, Կոկլենների, Առոա Բեռնարի խա-  
ղաձերի քննադատորեն վերցրած լավագույն  
մաները, այլև ոեալիստ ներկայացուցիչների՝  
Անթուանի, Գիտրիների, Ռեժանի ստեղծած  
նորագույն ուղղությունները»: Նրա արվեստի  
հասունացումն ու բյուրեղացումը կատար-  
վում է, սակայն, ոռուական ոեալիստական  
արվեստի խոր ու բարերար ազդեցության  
ոլորտում: Աշխատելով ու շփելով հայ բեմի  
այնպիսի մեծատաղանդ ներկայացուցիչների  
հետ, ինչպիսիք են Սիրանուշը, Արելյանը,  
Զարիֆյանը, Փափազյանը, — նա խորապես  
յուրացնում է արվեստի ազգային տրադի-  
ցիաները և իր լավագույն դերակատարում-  
ներով ու բեմագրություններով ստեղծել է մի  
խաղակերպ, որ արդեն իրենն է ամբողջովին՝  
Արմեն Արմենյանինը:

Արմենյանը՝ առաջիններից մեկը, հատուկ  
ուշագրություն դարձեց լուրջ շկոլայի ան-  
հրաժեշտության վրա. Նրա աշխատանքն այդ  
ուղղությամբ անգնահատելի է: Նրա ոեմիսո-  
րական տաղանդին, նուրբ ճաշակին և բազ-

մակողմանի կրթությանն ենք պարտական տասնյակ հաջող բեմադրությունների համար։ Արմենյանը լայն դիալագոնի տեր արվեստագետ է և միշտ էլ քանքարավոր դերակատար ինչպես դրամաներում, նույնպես և կոմեդիաներում։

Մեր կովառուրայի և գրականության շատ գործիչների նման Արմենյանը ևս իր ստեղծագործական երկրորդ երիտասարդությունն ապրեց սովետական շրջանում։ Նոր կողմերով, նոր երանգներով ու գույներով հարստացավ նրա դերասանական արվեստը, ստացավ առավել խոր բովանդակություն։ Լինելով հայ բեմի վետերաններից մեկը, Արմեն Աղմենյանն իր հարուստ կովառուրան, իր տաղանդը ի սպաս գրեց սովետահայ թատրոնի ծաղկման ու զարգացման գործին, դրանով խոկ հաստատուն տեղ գրավելով մեր բեմի անվանի վարպետների շարքում։



## ՀԱՎԵԼՎԱԾ

### ՄՍ.ՄՈՒԼԸ ԱՐՄԵՆ ԱՐՄԵՆՅԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ՄԱՍԻՆ

ՖԻԼԻՊՊՈ («ԿՐԵՄՈՆԱՅԻ ՎՆԱԳՈՐԾԲ»)

Առաջին արարվածը «Թրեմոնայի վնագործը», այնքան նուրբ և այնքան լավ հասկցված կերպով ներկայացվեցավ, որ պարզապես հիացուց ներկաները: Այդ արարվածին մեջ տեսանք, թե Արմենյան ի՞նչ ճարտար, ի՞նչ նրբագաց և որքան կատարյալ արթիսդ մ' է:

«Բյուզանդիոն» (Կ. Պոլիս), 1908, № 3726:

ԺՈՐԺ ԴԵ ՕՐՍԻ («ԳՈՒԿԵՐՆՅՈՒՐ»)

Ա. Արմենյանի կատարած դերը «Գուկերնյորում» անթերի էր. զարմանալի դյուրաշարժությունը, խանդավառությունը, նրա բուռն բնավորությունը իրենց սքանչելի արտահայտությունն են գտել Ժորժ Դերսի դերում:

«Տիֆլիսկий լիստօք», 1908, № 98:

Ես անհամբերությամբ սպասում էի, թե ինչքան է արդարացնելու իրեն Արմենյանը այդպիսի մի պատասխանատու դերում, այն էլ ռուսերեն լեզվով։ Եվ, ամեն սպասածից վեր, նա հանդիսացավ սքանչելի գուվերնյոր։

Այդ դերում ես տեսել էի հոչակալվոր դերասան  
*<Մարիոս>* Պետիպային և առանց չափականցության կարող եմ ասել, որ Արմենյանը բնավ չի պիջում վերջինիս՝ դերի ներքին հասկացողությամբ և տաղանդավոր խաղով։ Նրա կենդանի դիմախաղը և առանձնահատուկ ճկուն խաղը երկրորդ և երրորդ արարվածներում հիացրեց հասարակությանը։ Նա արժանացավ դահլիճը լցված ռուս և նայ ինտելիգենցիայի աղմկալից ծափահարություններին։

«Հօնայ քեռք», 1910, № 189։

Արմենյանը Ժորժ Ռուսիի դերում ցույց տվեց, որ արտասովոր արտիստ է։ Անտարակուսակ՝ դերը, բայլը, ժեստը, դեմքի շարժումը, բեմական ամեն մի նրբագիծը,— այս ամենը մեծապես տեղին են ու ճշմարտացի։ Բայց դերի այդ նուրբ մշակվածության մեջ նկատելի են ոչ միայն վարժվածությունն ու բեմական փորձը. զգացվում էր ճշմարիտ մի բան, որ գալիս է արտիստական ներքնաշխարհից։ Ռուսի-Արմենյանը՝ աշխուց է, հարաշարժ և ուրախ-աղմկոտ, ինչպես նրա երկրորդ հայրենիքի՝ գեղեցկութիւն Փարիզի փողոցը։

«Կավկազский край», 1915, № 118։

Արմենյանը, խոշոր ընդգրկման տեր մի դերասան, ստեղծում է ֆրանսիացի գուվերնյորի ցայտուն դեմքը, որը լիովին համապատասխանում է հեղինակի մտահղաց-

մանը ըստ գրիմի, մաներաների, դարձվածավորման, տոնի և կիսատոնի, վառ կոլորիտի և մշակված նրբագուն դետայների: Կատարումը գրավում է հանդիսատեսներին իր գեղեցկությամբ: Առանձնապես ցայտուն պահերում և տեսարաններում արտիստը հուզում է հասարակությանը և նրա ստեղծած կերպարը տպավորվում է երկար ժամանակով:

„Պատիգորսկое ԹХՕ,“ 1915, № 118:

Արմենյանը հանդիսանում է «Գովերնյորում» Ժորժ Դորսիի լավագույն դերակատարը ռուսական թեմում, ինչպես միաձայն ընդունել է մամուլը:

Եվ իսկապես, Արմենյանն այնքան արվեստով է կատարում այս դերը, որ հանդիսատեսին հասկանալի է այն ամենը, ինչ նա ասում է Ֆրանսերեն լեզվով: Տեսնել Արմենյանին, այդ նշանակում է գեղագիտական մեծ հաճույք ստանալ:

„Трудовая Абхазия“, 1926, № 145:

Ա. Արմենյանը, որպես մեկն այդ դերի շնորհալի կատարողներից, չնայած իր պատկառելի հասակին, ինքնատիպ մեկնաբանություն տվեց Ժորժ Դորսիի դերին, խաղի կենդանությունն ու աշխուժությունը պահելով մինչև ներկայացման վերջը—հանգույցի լուծումը: Արմենյանի խաղի առավելությունն այն է, որ նա Դյաչենկոյի կոմեդիային սոցիալական նոր շտրիխներ է ավելացնում, կարողանալով ցույց տալ կալվածատիրական դաստիարակության ամբողջ պատկերակությունն ու գարշանքը:

«Պրոլետար», 1933, № 202:

Ա. Արմենյանը Դորսիի (Գուվերնյոր) դերում կրկին անգամ հանդես բերեց իր դերասանական մեծ վարպետությունը և տեխնիկան: Խաղալով այդ դերը, ֆրանսերենի և ռուսերենի շաղկապմամբ, Արմենյանը վեր հանեց Դրիմի պատերազմից հետո Ռուսաստանում մնացած այդ կիսաժողովիկ, անհոգ, փողասեր, բայց և ազնիվ ֆրանսիացու ամբողջ տիպարը: Նրա աշխուլժ, կենսունակ, բավկարթիվ նյուանսներով լի խաղն արժանի է հիացմունքի:

«Բանվոր», 1934, № 102:

### ՅՈՒՍՈՒՄ («ՀԻՄԱՐԸ»)

Ինչպես պետք էր սպասել, ներկայացման ամբողջ հետաքրքրությունը կենտրոնացած էր պ. Արմենյանի վրա: Ճշմարիտն ասելով, պետք է ունենալ ոչ սովորական կոմիկական շնորհի՝ կատարել կարողանալու համար, առանց չափավանցությունների մեջ ընկնելու, ծիծառելի և հետաքրքրաշարժ կերպով այս հին, արդեն շատ անգամ ներ խաղացված պիեսը... Պ. Արմենյանը, կարելի է համարձակ ասել, գոհացրեց ամենախիստ պահանջներն անգամ:

„Батумский голос“, 1907, № 84:

«Հիմարը» ռուսական բեմի վրա ես չեմ տեսել, ուստի պ. Արմենյանի խաղը չեմ կարող համեմատության դնել ուրիշների խաղի հետ, կասեմ միայն, որ, ըստ իս, ավելի լավ ներկայացնել այդ տիպը, քան ներկայացրեց պ. Արմենյանը, հավիկ թե կարելի լիներ:

«Կալծեր», 1910, № 9:

Ֆուլդայի «Հիմարը» ներկայացումը «հերոսական» էր,  
իսկ ներոսն էր Արմենյանը: Նա կարողացավ «հիմարից»  
ստեղծել իդեալիստ, խորապես հմայիչ մի կերպար, որ  
կաշառում է իր անկեղծությամբ: Արմենյանի խաղի տեխ-  
նիկան կատարյալ է: Մտածված է տառացիորեն ամ-  
բողջը:

„Զակավակաչու օբօզրենի«, 1910, № 54:

Արմենյանը մեծ բեմի դերասան է, որ տիրապետում է  
խստրեն ստուգված և ճշգրտորեն հաշված պրիոմների:  
Նա ունի արտահայտիչ դեմք, բազմախոսուն ձեռքեր,  
որոնք նիանալի կերպով լրացնում են ունկնդիրներին,  
օտար խոսքը: Դերասանը, որ ներկայացուցիչն է խաղի  
ֆրանսիական դպրոցի, ցուց տվեց պարզամիտից մինչև  
դրամատիկ դերասանի դիավապոն ու նկարագծի թերևու-  
թյուն և դրանով էլ նվաճեց առլիտորիան:

„Վեգերե բադո« (Խարկով), 1926, № 227:

Արմենյանի «Հիմարը» բարի մարդու խորապես մշակ-  
ված կերպարն է, որ հավատում է «մարդկանությանը»,  
«հումանիզմին» և այդ հավատի վրա էլ նիմնում իր աշ-  
խարհվացգողությունը:

„Խարկովսկի պրոլետարի«, 1926, № 229:

### ՎԻՏԵՐՆԻՈ («ՍԱՏԱՆԻ ՃՈՒՏ»)

Ծիծաղ, անվերջ ծիծաղ էր ամբողջ ներկայացումը:  
Պ. Արմենյանը կատարյալ Սատանի ճուտ էր՝ շարժուն,  
որպես սնդիկ, կաչաղակի նման արագախոս, զարմանալի

թռվուն, ուղղակի իր տեսակի վիրտուով: Ահա՝ թե ինչ  
է ստեղծագործող շունչը: «Սատանի ճուտը» մի խոշոր  
ապացուց է դերասանի ահազին նշանակության:

«Բաքվի ձայն», 1913, № 57:

### ՖՐԱՆՅ («ԱՎԱՋԱԿՆԵՐ»)

Ներկայացման «մեխը» կազմում էր պ. Արմենյանն իր  
Ֆրանցով: Կարելի է ասել, որ մեր թատրոնի պատմու-  
թյան նոր շրջանում առաջին անգամն էինք տեսնում Շիլ-  
լերի Ֆրանցին հայ բեմի վրա: Մենք տեսնում էինք ոչ  
թե մի չարագործի, բուլվարային ռոմանների չարագործի,  
որպիսին սովորաբար դուրս են բերում դերասանները, -  
այլ մի նույնպես տանչվող մարդու, բողոքող բնության  
անարդարության դեմ, որը դարձնում է այդ մարդուն ծայ-  
րահեղ եսամոլ և մղում նրա ամեն մի ծգտումը, ամեն մի  
գործողությունը դեպի իր սեփական անձի, կենդանական  
պահպանության ապահովությունը: Շաբլոնական Ֆրանցին  
նայելիս, որի բացասական կողմերը, ի դեպ ասած, աշ-  
խատում են կարելիին չափ խտացնել, հանդիսականների  
մեջ զայրուցիք ու նողկանքի զգացմունք է ծագում միայն  
և ցանկություն՝ տեսնել այդ հրեշին ոչնչացված: Արմեն-  
յանի Ֆրանցը սակայն զայրուցիք հետ միասին շարժում  
էր նաև կարեկցություն, և նրա եղեռնական մահը, այդ-  
պիսի պայմաններում, ուրախության փոխարեն ճնշող ներ-  
գործություն արավ:

«Վատակ», 1908, № 56:

Արմենյան... Ֆրանցի դժվարին դերին մեջ իր տաղանդին բոլոր հատկությունները ցույց տվավ... Տռամին ամբողջ տևողության ինքվինքը գերազանցեց իր դեմքին ցցվատեսիլ, ահաբեկիչ արտահայտությունը, նայվածքին դժոխային սկեռումները, ճակտին կնճիռները ու շրթունքին դիվային ծիծաղները և հեգնալից կատաղությունները, որոնք կարձագանքեին շարունակի, իր մեջը ապագա ամենամեծ արվեստագետի մը սաղմը զգացնել կուտային: Վերջընթեր արարվածին մեջ խնդահարություններ կունենա, կրաշկուտիկ, կտատանի իր հոգիին ու միտքին պոռնը-կացումը կցուցադրե, վայրկան մը կլրջանա, դարձյալ պատրանքներու և ցնորքի շղթալումով մը կդողա, աչքերը անդունդներու պես կխորունկնան, նայվածքը գեհենի կրակներ կցայտեցնէ: Մինչև հիմա Ֆրանց ատելություն հրավիրած էր իր վրա. Արմենյանի Ֆրանցը արգահատանք, կարեկցություն կստեղծե իր շուրջը:

«Արմելք», 1908, № 6967:

«Ավագակներու» հայ տեսլածությունը վիս մանավանդանոր համար կիետաքրքրեր, վասն վի նա ինձ բաղդատության եւր պիտի ընծայեր ինձ արդեն ծանոթ գերմանական ներկայացման հետ ծեռամբ արվեստին վերին բարձրությանց մեջ սավառնող վարպետներու, տիտաններու կարողության աստիճանաչափը ծեռքիս մեջ, պիտի հաստատեի թե ինչ կարծեին հայ արվեստագետները և թե որչափ կարողացած էին թափանցել մի օտար հանճարի մեծ ստեղծագործությանը, որ թեև համաշխարհային իր ընդհանուր գծերուն մեջ, սակայն ունի նաև ազգային տեղական ինքնահատակ նրբություններ, որոնք շատ ու

շատ դժվարություններ կհարուցանեն օտարականին կատարյալ ըմբռնման դեմ:

Տեր Արմենյան Ֆրանցի դերին մեջ շատ աչքառու հաջողություն ունեցավ, իր միմիքը շատ արտահայտիչ է, լավ աստիճանավորված և լիովին համապատասխան պինքը հուզող կիրքերուն: «Ավագակներու» ամբողջ տևողության միջոցին այն պատրանքն ունեցա, թե բեմին վրա կգտնվեր մի գերմանացի խումբ, որու հանկարծ, չգիտեմ ինչպես, վիճակված լիներ հայերեն ներկայացնել իր ամենեն ազգային թատրոբակին այս անմահ գործը... Ես առաջին անգամն է, որ կհանդիպիմ մի հայ թատերախմբի, որ ունի գեղարվեստին բարձր ըմբռնումը, բարին ամենեն ազնիվ և ամենեն եվրոպական իմաստով...

«Սանկումեի Էֆքյար», 1908, №\_2297:

Մտնում է կրտսեր որդին՝ Ֆրանց Մոոր-Արմենյանը, մոտենում մտատանջության ծանր բեռի տակ կըած ծերունուն և, դիվական փալլն աչքերի մեջ, նենգավոր ծափոք ծամածուռ դեմքին, շոգմոզ խոսքերով նոր անտակ վիշտն է շանում փարատել:

Դարձինք թնդում է որոտընդոստ, բուռն ծափերից, ապա փոքր առ փոքր սկսվող խաղի հետ՝ իշնում է մեռելային լուսաբանը և իշխում ամենքի վրա: Արմենյան-Ֆրանցը՝ նոր բավկաթոռի մոտ՝ դավադրության նուրբ ցանցն է հյուսում Կառլոս Եղբոր դեմ. ներքին սարսուռ համակում է ողջ էությունդ, և մի պահ թվում է, թե ինքը ես ընկել դավադրության այդ նուրբ ցանցի մեջ, փորձում ես դուրս գալ, բայց ելք չես գտնում:

Լարված հափշտակությամբ նետևում ես Ֆրանցի յուրաքանչյուր խոսքին, նրա շարժուձևերին, դեմքի յուրաքանչյուր կծկումին և ծամածոռության, որոնք կերտում են չարախինդ ու սև նոգու ալլանդակ պատկերը:

Սոսկալի է այդ պատկերը իր դժողով հայացքով, իր մահասարսուռ արտահայտությամբ: Արմենյանի տաղանդը կերտեց մի Ֆրանց, որի մեջ արվեստը՝ հոգեբանական բարդ ապրումները դրսկորելու տեսակետից՝ հասնում էր կատարելության:

Արմենյանի Ֆրանցը դավադրանքի իր հյուսած ցանցով կեղեցում է հանդիսատեսի և սիրտը, և՝ նոգին: Արմենյանի Ֆրանցը անմեռ է, անմահ:

«Կարմիր աստղ», 1922, № 58:

### ՍՈՒՐԵՆ («ՊԱՏՎԻ ՀԱՄԱՐ»)

Արմենյան Սուրենի դերը տարավ աշխուժով, սահուն, ներկայացնելով դատարկապորտ, երես առած, չարաճճի, լայիր, զգայնասեր երիտասարդի մի տիպ, որը արգասիք է իր ժամանակի անսկլբունք ընկերակցական կյանքի:

«Մշակ», 1910, № 232:

### ՅԱԳՈ («ՕԹԵԼԼՈ»)

Յագոյի դերակատար Արմենյանը անպայման խոշոր ձիրքի և անվիճելի փորձի տեր է: Արմենյանն ունի փալլուն դիկցիա, ինտոնացիայի անսահման հարստություն: Ընդհանուր առմամբ այս դերասանը արժանի է մայրաքաղաքի խոշոր բեմերին:

„Յեգերնե ռադիո“ (Խարկով), 1925, № 157:

## ՈԱՆԿ («ՆՈՐԱ»)

Արմեն Արմենյանը (դոկտ. Ռանկ) դերն ըմբռնում է իր ամբողջ խորությամբ: Նրա խաղարկության մեջ հայտաբերված չափի զգացումը, մահվան հպոր թափը, իր կյանքի քայլայման ողբերգությունը, հանգիստ, անվըրդով, փիլիսոփայորեն ասված խոսքի խորությունը, հարուստ միմիկան դարձնում են Արմենյանի խաղը լրիվ, մտածված և բարձրորեն գեղարվեստական:

«Խորհրդային Հայաստան», 1928, № 39:

## ՀԱՐԲԱԳՈՆ («ԱԳԱՀԸ»)

Արմենյանի Հարպագոնը ժլատության մարմնացումն է. խելահեղության չափ ագահ, վաշխառու, փողամոլ: Արտիստը միանգամայն հավատարիմ մնալով Մոլիերին, սկզբից մինչ վերջը հանդես է գալիս որպես ժլատ, նա տեղ-տեղ իր կացությունն արտահայտում է ողբերգական շնչով, սակայն Արմենյանը վարպետությամբ անձնական ողբերգությունը մատուցում է իր ծաղրական վերաբերմունքով, որովհետև Հարպագոնի տիպն ամենից առաջ կոմիկական է: Այս բանն առանձնապես ընդգծվում է Հարպագոնի նշանավոր մենախոսության մեջ՝ «Մեռնում եմ, մեռա, թաղեցին...», որն Արմենյանը կատարում է շատ հաջող: Հարպագոնն Արմենյանի խոշոր ստեղծագործություններից մեկն է:

«Խորհրդային Հայաստան», 1938, № 74:

## ԲԱՐՈՆ («ԺԼԱՏ ԱՍՊԵՏ»)

«Ժլատ ասպետ»-ում բարոնի դերում հանդես եկավ ժողովրդական դերասան Արմեն Արմենյանը, որն իր մյուս հրաշալի դերակատարումների կողքին ստեղծեց մի նոր տիպար: Արմենյանն աստիճանական կարգացմամբ, խորությամբ ցուցադրում է բարոնի դրամաշորթությունը, ժլատությունը: Չափազանց ակդրու և հուվիչ են այն մոմենտները, երբ զգացվում է ֆեոդալի խելացնորության հասնող ոսկեպաշտությունը:

«Խորհրդային արվեստ», 1937, № 6:

## ՇԱՅԼՈՎ («ՎԵՆԵՏԻԿԻ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ»)

Ժողովրդական արտիստ Ա. Արմենյանն ամենաճիշտ մոտեցումն է հանդես բերում Շայլոկի մեկնաբանման խնդրում: Նա վաճառական է, ժլատ, վաշխառու, խորամանկ, սրամիտ և վրեմի անհուն կրթերով լեցուն: Նա իր նպատակի մեջ հետևողական է, իր պահանջներում չվիշող: Արմենյանը վարպետությամբ Շայլոկի մարդկայինը, առանձին տեսարանները, բրիստոնեռության և հղվացած բուրժուազիայի դեմ ուղղված դիմակավորված բողոքը զուգակցում է իր հրեա լինելու հետ: Եթե Զեսիկան նրա մոտից փախչում է, հինգերորդ պատկերում Շայլոկը (Արմենյանը) բեմ է մտնում խիստ ճնշված ու վշտածեծ: Նա պաշտում է աղջկանը, բայց նա դավաճանել է նորը, փախել է ազնվական Լորենցոյի հետ: Շայլոկի համար բարդ ու փորորկոտ անցումներով, տեղատվություններով և մակընթացություններով լի այս պատկերն Արմենյանը մեծ

հուզականությամբ է կատարում: Դատաստանի տեսարանում Արմենյանը միս կտրելու ամբողջ պրոցեսը կապում է հիմնականում վաշխառու-առևտրականի անհագուրդ վրեժի հետ:

«Խորհրդային արվեստ», 1937, № 6:

Արմեն Արմենյանը մեծ տաղանդի տեր արտիստ է, արժանի այն ժողովրդականությանը, որ նա վայելում է ճշմարիտ արվեստը գնահատողների շրջանում: Ներկա գտնվողները հիացած էին արտիստի նուրբ խաղով. դերի իր բնական կատարմամբ նա կարողացավ հսկայական տպավորություն գործել:

„Journal du Caire“, 1907, № 31:

Ճիշդ բարիսցի դերասանն է Արմենյան. վվարօ, անկեղծ, շենչող և համակրենիի: Տեսնվե անգամ մը հետք և գրավ կղնեմ, որ երկրորդ անգամույն վայն կսիրես ամենին բարեկամի մը պես:

«Ծաղիկ», 1908, № 67:

Արմենյանը լայն դիապազոնի տեր արտիստ է և միշտ հաջող կատարող ինչպես դրամայում, նույնպես և կոմեդիայում: Լինելով ֆրանսիական դպրոցի աշակերտ, Արմենյանը հանդիսանում է արևմտյան տրադիցիաների հաղորդիչ:

„Бакинский рабочий“, 1921, № 17:

Արմենյանն արտիստ է այս բառի ամենալայն իմաստով: Զարմանալի վարպետությամբ Արմենյանը հաղորդում է իր խաղացած ներոսի հոգու նրբերանգները: Նրա ամեն մի հայացքը, ժեստը, խոսքը գեղարվեստորեն մշակված է:

„Կոմմոնիստ“ (Բաքու), 1921, № 192:



Նշան Հակոբի Մուրադյան  
«Ա Ր Մ Ե Ն Ա Ր Մ Ե Ն Յ Ա Ն»

Խմբագիր  
ՍԱՐԳԻՍ ՄԵԼԻՔՍՅԵԹՅԱՆ  
Տեխ. խմբագիր  
Ս. ՍԱՐԳՍՅԱՆ  
Մրացրիչ  
Դ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

\*

Հանձնված է արտադրության 3/2—1959 թ.  
Ստորագրված է տպագրության 5/6—1959 թ.  
Պատվեր 293, տպարանակ 2000: Վ.Ֆ 04587  
Թուղթ 70.92 1/32: Տպագրական 3,75 մամ., +6 ներդիր:  
Հրատարակչական 2,85 մամուլ: Գինը 2 ռ. 90 կ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  
Երևան, Ստալինի պող. 48

\*

ՊՈԼԻԳՐԱՖԿՈՄԲԻՆԱՏ, ԵՐԵՎԱՆ, ՏԵՐՅԱՆ 91:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0033706

ԳԻՒՅՈՒ 2 Ա. 90 Կ.

A 297